

**ԻՐԱՉ Է**  
**ԱՌՈՂՋ ԵԿԵՂԵՑԻՆ**

# **ՄԱՐԿ ԴԵՎԸՐԻ ԿՈՂՄԻՅ CROSSWAY ԳՐՔԵՐԸ՝**

*Առողջ Եկեղեցու Իննը Նշանները*

*Նախասահմանված Եկեղեցի  
(Ալեքսանդր Փոյի հետ համարեղ)*

*Ավերարանը և Անձնական Ավերարանչություն*

*Տիև Կրակարանի Պարզամբ.  
Տրված Խոստումները*

*Նոր Կրակարանի Պարզամբ.  
Կարարված Խոստումները*

*Եկեղեցիներին հանդիպող 12 Մարտահրավերները*

*Ինչ է ուզում Աստված մեզնից*

**ԻՐՆՉ Է  
ԱՌՈՂՋ ԵԿԵՂԵՑԻՆ**

**ՄԱՐԿ ԴԵՎԼԸՐ**

**CROSSWAY  
WHEATON, ILLINOIS**



*Երախարագիրությունն առ Ասրված  
այս հավատարիմ հովիվների համար, որոնց ճանաչել եմ՝*

ՆԱՐՈՒԴ ՓԸՐԴԻ  
ՎԵԼԼԻ ԹՈՄԱՍ  
ԷՂ ՆԵՆԻԳԱՐ

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան. Առակ	7
Ներածություն. Ի՞նչ էք փնտրում եկեղեցում	10
<b>ՄԱՍ 1. Ի՞ՆՉ Է ԱՌՈՂՋ ԵԿԵՂԵՅԻՆ</b>	15
1. Ձեր Զրիսարանությունը և Ձեր Եկեղեցին	16
2. Ի՞նչ է եկեղեցին... և ի՞նչ չէ	27
3. Ինչպիսին պետք է ձգտի լինել ցանկացած եկեղեցի. Առողջ	33
4. Ինչպես լավագույնս առաջնորդել. Ինչպես ներկայացնել Աստուծո բնավորությունը	43
Նամատոր ակնարկ. Եթե մտածում եք Եկեղեցին թողնելու մասին	51
<b>ՄԱՍ 2. ԱՌՈՂՋ ԵԿԵՂԵՅՈՒ ՏԻՄՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐԸ</b>	53
5. Բացադրական քարոզ	55
6. Աստվածաշնչյան աստվածաբանություն	61
7. Բարի Լուրի աստվածաշնչյան հասկացությունը	68
Նամատոր ակնարկ. Ինչպես գտնել լավ եկեղեցի	72
<b>ՄԱՍ 3. ԱՌՈՂՋ ԵԿԵՂԵՅՈՒ ԿԱՐԵՎՈՐ ՆՇԱՆՆԵՐԸ</b>	74
8. Դարձի գալու աստվածաշնչյան հասկացողությունը	76
9. Ավերարանչության աստվածաշնչյան հասկացողությունը	81
10. Անդամության աստվածաշնչյան հասկացողությունը	86
11. Եկեղեցու աստվածաշնչյան կարգապահությունը	94
12. Աստվածաշնչյան աշակերպությունը և աճը	101
13. Եկեղեցու աստվածաշնչյան առաջնորդական կազմը	107
Անփոփում. Երբ ժամանակն է գործի անցնելու	115
Նավելված. Առողջ Եկեղեցուն բնորոշ Ուխտ	119
Նախուկ նրախարագիտության խոսք	121

# ՆԱԽԱԲԱՆ. ԱՌ-ԱԿ

Բայց հիմա Աստված անդամները՝ նրանց ամեն մեկը՝ դրավ մարմնի մեջ ինչպես կամեցավ: Եվ եթե ամենը մեկ անդամ լիներ, ո՞րպեղ էր մարմինը: Բայց հիմա անդամները շար են, իսկ մարմինը մեկ: Աչքը չէ կարող ձեռքին ասել, Ինձ պետք չես. կամ դարձյալ գլուխը ուրներին՝ ինձ պետք չէք:

## -1 Կորնթացիներին 12:18-21

**Քիթն ու Ձեռքը** նստած եկեղեցու նստարանին գրուցում էին: Կիրակնօրյա առավոտյան պաշտամունքը, որն առաջնորդում էին Ականջն ու Բերանը, հենց նոր էր ավարտվել, և Ձեռքն ասում էր Քիթին, որ ինքն ու իր ընկերակիցը որոշել են փնտրել մեկ այլ եկեղեցի:

«Իսկապե՞ս», արձագանքեց Քիթը Ձեռքի նորությանը: «Ինչո՞ւ»:

«Օ՛, չգիտեմ», ցամ նայելով ասաց Ձեռքը: Մովորաբար եկեղեցու մարմնի մյուս անդամների համեմատ նա ավելի դանդաղ էր խոսում: «Կարծում եմ, քանի որ եկեղեցին չունի այն, ինչ ես և Կիկ. Ձեռքն ենք փնտրում»:

«Բարի՛, իսկ ի՞նչ եք դուք փնտրում եկեղեցում», հարցրեց Քիթը: Նրա այս խոսքերի մեջ կարեկցանք կար: Մակայն անգամ այս խոսքերն ասելիս նա գիտեր, որ բաց է թողնելու Ձեռքի պատասխանը: Եթե Ձեռքերը չէին կարող տեսնել, թե ինչպես են Քիթը և բոլոր մյուս առաջնորդները եկեղեցու մարմինը փանում ճիշտ ուղղությամբ, ապա մարմինը առանց իրենց էլ կարող էր:

Ձեռքը մինչև պատասխանելը պետք է մտածեր: Նա և Կիկ. Ձեռքը սիրում էին Նովիվ Բերանին և նրա ընկերակիցին: Իսկ փառաբանության ծառայող Ականջի հանդեպ լավ էր տրամադրված: «Դե, մենք փնտրում ենք մի վայր, որպեղ մարդիկ մեզ ավելի նման են», վերջապես կմկմաց Ձեռքը: «Մենք փորձեցինք ժամանակ անցկաց-

նել Ուրբերի հետ, սակայն չկարողացանք նրանց հետ կապ հաստատել: Նեպո միացանք բոլոր Ուրնամատրների փոքր խմբին, բայց նրանք շարունակ խոսում էին գուլպաների, կոշիկների և տարբեր բուրմունքների մասին: Իսկ դա մեզ չէր հետաքրքրում»:

Քիթը այս անգամ անկեղծ զարմանքով նայեց նրան. «Դուք ի՞նչ է ուրախ չէք, որ նրանց հետաքրքրում են տարբեր բուրմունքներ»:

«Իհարկե, իհարկե, սակայն դա մեզ համար չէ: Ապա այցելեցինք Կիրակնօրյա դպրոց բոլոր ձեր դեմքի մասերի հետ: Տիշտ՞ում եք: Մի քանի ամիս առաջ մենք մի քանի Կիրակի այցելեցինք»:

«Տրաշալի էր, որ մեզ միացար»:

«Շնորհակալություն: Սակայն բոլորն ուզում էին միայն խոսել, լսել, հոբոտել և համբուսել: Իրականում թվում էր, թե դուք երբեք էլ չէիք ցանկանում անցնել գործի և ձեր ձեռքերը կեղտոտել: Այնուամենայնիվ, փիկին Ձեռքը և ես մտածում ենք ստուգել Արևելյան Մասում գրավող այն նոր եկեղեցին: Մենք լսել ենք, որ նրանք շարունակում են ծափահարում, ձեռքերը վեր բարձրացնում, որը հենց այն է, ինչ ուզում ենք»:

«Տրամմմ», պատասխանեց Քիթը, «ես հասկանում եմ ինչ նկատի ունեք: Ցավում եմ, որ գնալու եք, սակայն կարծում եմ, որ պետք է վարվեք այնպես, ինչպես ձեզ է հարմար»:

Այդ պահին փիկին Ձեռքը, որը մեկ ուրիշ խոսակցությամբ էր տարված, ետ դարձավ միանալու ամուսնու և Քթի գրույցին: Ձեռքը համառոտ բացատրեց, թե ինչի մասին էին խոսում ինքն ու Քիթը, որից հետո Քիթը կրկնեց, որ փխրում է Ձեռքերի հեռանալու այդ մտքից: Սակայն նա կրկին նշեց, որ հասկանում է նրանց, քանի որ ըստ երևույթին նրանց կարիքները չէին բավարարվում այդ եկեղեցում:

Տիկին Ձեռքը գլխով համաձայնության նշան տվեց: Նա ուզում էր քաղաքավարի լինել, բայց և այնպես իրականում նա փխտուր չէր, որ հեռանում էր: Նրա ամուսինը տարիներ շարունակ բավականին քննադատական ակնարկներ էր կատարել այդ եկեղեցու վերաբերյալ, այնպես որ նրա սիրտն էլ էր սկսել արագացուցիկ իր ամուսնու սիրտը: Սակայն նա երբեք էլ չէր պոռթկացել և մտել Մարմնի դեմ բաց վիճարանության մեջ: Իրականում, նա սովորաբար ներում է



հայցել «այդքան բացասական» գրավելու համար: Բայց այդ փոքրիկ փորձերը, որոնց նա թույլ էր տալիս աջ ու ձախ սողոսկել, ունեցել էին իրենց ազդեցությունը: Փոքր խմբակները մի քիչ «փակ» էին, երաժշտությունը մի քիչ հնաժողով էր, ծրագիրը մի քիչ անհեթեթ էր թվում, ուսմունքը ամբողջությամբ իրենց ուզածով չէր: Արդյունքում, նրանց երկուսի համար էլ դժվար էր համակերպվել այս ամենի հետ և ի վերջո որոշեցին, որ այդ եկեղեցին իրենց համար չէր:

Բացի այդ փոքրիկ ջանքերը գիտե՞լ, որ իրենց դուստրը՝ Ճկույթիկը, չէր հարմարվում երիտասարդների խմբի հետ: Այնպես թույլ էր շատ էին փորձերում նրանից և նա իրեն իր ամենի մեջ չէր գտնում:

Այս փոքրիկ ջանքերը ինչ-որ կերպ արտահայտեց իր երախտագիտությունը Բիլի և մյուս առաջնորդների հանդեպ: Նամենայն դեպս գրույցն արդեն իսկ շատ էր երկարել Բիլի համար և բացի այդ նա հագիվ էր գսպում իրեն, որ չփոշար փոքրիկ ջանքի օժանդակի հոփից: Նա շնորհակալություն հայտնեց փոքրիկ ջանքին իրենց քաջալերելու համար, կրկին նշեց, որ ցավում է, որ հեռանալու են, ապա շրջվեց ու հեռացավ: Ու՛ն էին պետք ջանքերը: Ըստ երևույթին նրանց պետք չէին:

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ. ԻՆՉ ԵՔ ՓՆՏՐՈՒՄ ԵԿԵՂԵՑՈՒՄ

**Այսպիսով, ի՞նչ եք** փնտրում եկեղեցում: Ննարավոր է, որ վաղուց չեք սրբաձեռն այս հարցի շուրջ: Բայց մի պահ ինքներդ ձեզ հարցրեք, ինչպիսի՞ն է կատարյալ եկեղեցին: «Կատարյալ եկեղեցին մի վայր է, որտեղ կա...»:

*Գեղեցիկ երաժշտություն.* Երաժշտություն, որը ուսուցանում է և այն կյանքի կոչում: Դուք չեք ուզում կիթառներ և հարվածային գործիքներ: Դուք ուզում եք երգչախումբ և ջութակահարներ: Գեղեցիկ երաժշտություն, որը փառավորում է Աստծուն: Կամ միգուցե դուք ուզում եք կիթառներ և հարվածային գործիքներ՝ մի տեսակ ժամանակակից և այժմեական: Տիմա մարդիկ այդպիսի երաժշտություն են լսում ռադիոյով. ուրեմն շարժվենք ըստ նրանց ճաշակի:

Ննարավոր է երաժշտությունը այնքան էլ կարևոր չէ ձեզ համար, որքան քարոզը: Դուք ուզում եք մի եկեղեցի, որտեղ քարոզները լավն են՝ իմաստալից, բայց ոչ ծանրամարս, աստվածաշնչյան, բայց ոչ ձանձրալի, գործնական, բայց ոչ մեղադրական և օրինապահ: Իհարկե քարոզչի ով լինելը նպաստում է այն բանին, թե ինչպիսին կլինեն իր քարոզները, և իհարկե կան տարբեր տեսակի քարոզիչներ՝ եռանդուն գիտնականներ, ովքեր սիրում են վարդապետություն և երբեք չեն ժպտում, զվարճեցնողներ՝ մի միլիոն պատմություններով, ընդհանրական խորհրդատուներ, որոնք միշտ «եղել են այդ իրավիճակում»: Իհարկե, ես պարզապես պարկերավոր եմ ներկայացնում, սակայն մեզանից շատերը իրոք ակնկալիքներ ունեն, թե ինչպիսին պետք է լինի քարոզիչը, այնպես չէ՞:

Կամ գուցե դուք փնտրում եք մի եկեղեցի, որտեղ մարդիկ գտնվում են ձեր նման կյանքի միևնույն մակարդակում: Դուք կարող եք նրանց հետ կապ հաստատել: Նրանք կհասկանան, թե ինչի միջով եք դուք անցնում, քանի որ իրենք էլ հենց նույն իրավիճակներով են անցնում: Նրանք են ձեր պես քոլեջից դուրս են մնացել: Նրանք էլ ձեր պես փոքր երեխաներ ունեն: Նրանք էլ շուտով թոշակի կանցնեն, ինչպես դուք: Նրանք էլ ձեր պես գիպեն, թե ինչ է նշանակում գնումներ կատարել էժանազին խանութներից կամ էլ հակառակը՝ ամենաթանկ բուրդիկներից: Նրանք էլ ձեր պես քաղաքի կենտրոնից են կամ էլ գուցե գյուղից:

Եվ կրկին, միգուցե ձեր համար եկեղեցում ամենակարևորը եկեղեցու կյանքում ներգրավված լինելու հնարավորություններն են՝ ծառայելու, բարեգործություններ կատարելու դաշտերը: Արդյո՞ք եկեղեցին ակտիվ է ավերարաջության կամ միսիոներության մեջ կամ էլ աղքատներին օգնելու մեջ: Արդյո՞ք այն հնարավորություններ է ընձեռում ձեզ և ձեր որդուն հանդիպելու այլ հայրերի և որդիների հետ: Իսկ միգուցե եկեղեցին հնարավորություններ ընձեռի ձեզ օգնելու մանկական ծառայությանը: Արդյո՞ք եկեղեցին ունի այնպիսի ծրագրեր, որոնք կգրավեն ձեր երեխաների կամ պապանիների ուշադրությունը:

Կարծում եմ, որ կան մարդիկ, որոնք փնտրում են մի եկեղեցի, որը «բաց է Սուրբ Հոգու հանդեպ»: Սուրբ Հոգին է, որ առաջնորդում է մեզ, ուստի ուզում եք մի եկեղեցի, որտեղ մարդիկ արագ են արձագանքում Նրա ձայնին, արագ են Նրա գործի վերահսկման մեջ, արագ են հավատում այն զարմանահրաշ գործերին, որ Նա կարող է անել: Դուք հոգնել եք շրջապատված լինել Հոգին մարողներով և ավանդապաշտներով: Սուրբ Հոգին նոր բաներ է անում: Նա մեզ նոր երգեր է փայխ:

Կամ գուցե դուք փնտրում եք մի եկեղեցի, որը ձեր մեջ որոշակի զգացմունքներ է առաջացնում: Ոչ այն, ինչ դուք սովորաբար պատկերացնում էիք: Բայց, եթե դուք սովոր եք այնպիսի եկեղեցու, որն ինչ-որ իմաստով հիշեցնում է մե՞ծ հանրախանութ կամ հին մատուռ կամ սրճարան, ապա հասկանալի է, որ ձեր փնտրած իդեալական եկեղեցին պետք է այդպիսին լինի: Դա սպասելի է: Չի՞ պատահել,

որ մեզնից շարերը արդեն հայրական Կրիստոսից հեռացած լինելով հանկարծ կարող ենք ինչ-որ փոփոխություններ, հոգիներ կամ ձայներ, որոնք հիշեցրել են մեզ մեր հայրական փոփոխությունը:

Այս ամեն ինչը կարող է լինել թե՛ լավ, և թե՛ առնվազն չեզոք դեր խաղալ: Իրականում, ես պարզապես ուզում եմ, որ սկսեք մտածել, թե ինչն էք ամենաշատը արժանորում եկեղեցում:

Ի՞նչ եք փնտրում, մի վայր, որտեղ ձեզ կողջունեն՞, աշխո՞ւյժ վայր, վստահելի՞, մե՞ծ, մարմնի՞կ, գերժամանակակի՞ց, հեղափոխի՞ր, ամուր հասարակարձ:

Ինչպիսի՞ն պետք է լինի եկեղեցին:

## ***Թեմա բոլոր Քրիստոնյաների համար***

Նախքան կնայենք, թե Աստվածաշունչն ինչ է ասում, թե ինչպիսին պետք է լինեն եկեղեցիները, որը մենք կանենք առաջին մի քանի գլուխներում, ուզում եմ, որ մտածեք, թե ինչու եմ առաջադրում այս հարցը, հարկապես, եթե դուք հովիվ չեք: Ի վերջո, արդյո՞ք առողջ եկեղեցիների թեմայով գիրքը նախատեսված չէ հովիվների և առաջնորդների համար:

Այո՛, այն հովիվների համար է, բայց և այնպես՝ յուրաքանչյուր Քրիստոնյայի: Նիշե՛ք. *դա հենց այն մարդիկ են, որոնց դիմում են Նոր Կտակարանի հեղինակները*: Երբ Գաղատիայի եկեղեցիները սկսեցին լսել սուր վարդապետներին, Պողոսը նրանց գրեց և ասաց. «Ջարմանում եմ, որ այսպես շուտով փոփոխվում եք ձեզ Քրիստոսի շնորհի մեջ կանգոյից դեպի ուրիշ ավերարան» (Գաղ. 1:6): Ովքե՞ր են այս «ձեզ»-ը, որոնցից Պողոսը հաշիվ էր պահանջում սուր վարդապետների վերաբերյալ: Ոչ միայն հովիվները, այլ եկեղեցու ամեն անդամ: Նախավոր է ակնկալում եք, որ նա պետք է գրեր եկեղեցիների առաջնորդներին և ասեր. «Բավական է սովորեցնեք այդ հերձվածողությունը»: Բայց նա այդպես չի ասում: Նա ամբողջ եկեղեցուց է հաշիվ պահանջում:

Դարձյալ, երբ Կորնթոս քաղաքում գրավող եկեղեցին թույլ է փայլա իր ներսում չվերահսկվող մի անառակության դեպք, Պողոսը կրկին դիմում է անմիջապես եկեղեցուն (1 Կորնթ.5): Նա չի դիմում

եկեղեցու հովիվներին կամ առաջնորդական կազմին, որպեսզի այս խնդիրը լուծեն: Պողոսը եկեղեցուն է ասում, որ հոգ փանեն այդ մասին:

Այսպիսի դեպքեր կարելի է հանդիպել Նոր Կրակարանի շարձումներում:

Վարահ եմ, որ առաջին դարի այդ եկեղեցիների հովիվները լսում էին, թե ինչպես էին Պողոսը և Պետրոսը, Նակոբոսը և Նովհաննեսը դիմում իրենց համայնքներին: Եվ վարահ եմ, որ հովիվները ի պատասխան նախաձեռնում և առաջնորդում էին հենց այնպես, ինչպես առաքյալներն էին կարգադրում իրենց նամակներում: Մինչդեռ հեղինակը առաքյալների օրինակին և դիմելով *ձեզ*՝ հովիվներին և եկեղեցու անդամներին, վարահ եմ, որ պատասխանատվությունը դնում եմ ի վերջո ճիշտ փորձերին: Ի վերջո, որպես Քրիստոնյաներ *դուք* և եկեղեցու բոլոր անդամներն եք Աստուծո առաջ պատասխանատու, թե ինչպիսին է դառնում ձեր եկեղեցին, և ոչ թե հովիվներն ու մյուս առաջնորդները, այլ *դուք*:

Ձեր հովիվները կանգնելու են Աստուծո առաջ և հաշիվ փակելու, թե ինչպես են առաջնորդել ձեր եկեղեցին (Եբր.13:17): Սակայն մեզնից յուրաքանչյուրը, որ Տեր Տիտոս Քրիստոսի աշակերտն է, հաշիվ է փակել այն բանի համար, թե արդյո՞ք կանոնավոր կերպով եկեղեցու հետ միասին *հավաքվել* ենք, մեկս մյուսին *դրոշմել* եկեղեցին սիրելու և բարի գործեր կատարելու, և *պայքարել* Ավետարանի հույսի ճիշտ ուսմունքը պահելու համար (Եբր.10:23-25):

Սիրելի՛ բարեկամ, եթե դուք Քրիստոնյա եք համարում ձեզ, սակայն մտածում եք, որ առողջ եկեղեցիների մասին գիրքը եկեղեցու առաջնորդների կամ գուցե «աստվածաբանների» համար նախատեսված գիրք է, ուրեմն Քրիստոնեական կյանքի վերաբերյալ գրքեր կարդալու փոխարեն, հնարավոր է ժամանակն է կանգ առնել և նորից մտածել, թե իրականում ինչ է Աստվածաշունչն ասում այն մասին, թե ով է Քրիստոնյան: Մենք այդ մասին մանրամասն կքննարկենք գլուխ 1-ում:

Նաջորդող գլխում կքննարկենք, թե ինչ է եկեղեցին (գլուխ 2), որն է Աստուծո վերջնական նպատակը եկեղեցիների համար (գլուխ 3), և

թե ինչու Աստվածաշունչը պետք է լինի մեր եկեղեցիների ուղղորդը (գլուխ 4):

Եթե դուք արդեն համաձայն եք, որ Աստվածաշունչը պետք է ուղղորդի մեր եկեղեցիներին, որպեսզի երևա Աստծո փառքը, հնարավոր է ցանկանաք միանգամից ցատկել գլուխ 5, որտեղ թվարկում եմ առողջ եկեղեցու իննը նշանները: Թող Տերը օգտագործի մեր միասնական խորհրդածությունը՝ պատրաստելու Իր հարսին Իր գալստյան օրվա համար (Եփ.5:25-32):

ՄԱՍ 1  
**ԻՆՉ Է ԱՌՈՂՋ  
ԵԿԵՂԵՑԻՆ**

## ՉԵՐ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՉԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ

**Երբեմն քոլեջի ճամբարային** ծառայողները ինձ խնդրում են խոսել իրենց ուսանողների հետ: Մի քանի այսպիսի առիթներից հետո ինձ արդեն գիպեն, որ իմ դիպրոդություններն սկսում եմ այսպես. «Եթե դուք ձեզ Քրիստոնյա եք համարում, սակայն չեք հանդիսանում որևէ եկեղեցու անդամ, որտեղ հաճախում եք, ապա վախենամ, որ դուք դժողքի ճանապարհին եք»:

Դա իրոք գրավում է նրանց ուշադրությունը:

Բայց մի՞թե ես պարզապես ուզում եմ նրանց հանկարծակիի բերել: Չե՛մ կարծում: Մի՞թե ուզում եմ վախեցնելով դարձնել ինչ-որ եկեղեցու անդամ: Իրականում, ո՛չ: Մի՞թե ուզում եմ ասել, որ եկեղեցու անդամ դառնալով եմ դառնում Քրիստոնյա: Իհարկե, ո՛չ: Այսպիսի բաներ ասող գիրքը դուրս նետելք պատուհանից:

Ուրեմն, ինչո՞ւ պետք է սկսեի այսպիսի զգուշացմամբ: Քանի որ ուզում եմ, որ նրանք տեսնեն, թե Քրիստոնյայի կյանքում որքան հրապապ է առողջ տեղական եկեղեցու առկայությունը և սկսեն մարդկանց վկայել եկեղեցու հանդեպ սիրո մասին, այնպիսի եկեղեցու, որը ներկայացնում է Քրիստոսին և Նրա հետևորդներին:

Արևմուտքի (և այլ երկրամասերի) շատ Քրիստոնյաներ հակված են իրենց Քրիստոնեությունը դիպարկել որպես Աստծո հետ անձնական փոխհարաբերություն և միայն այդքանը: Ընդհանրապես նրանք գիպեն, որ այս «անձնական փոխհարաբերություն»



ասվածը որոշակիորեն կապված է իրենց ապրելակերպի հետ: Սակայն ես մտախոհ եմ, որ շատ Քրիստոնյաներ չեն գիտակցում, որ այս ամենակարևոր փոխհարաբերությունն Աստծո հետ պարտադրում է մի շարք երկրորդական անձնական փոխհարաբերություններ, որոնք Քրիստոսը հաստատում է մեր և իր մարմնի՝ Եկեղեցու միջև: Այս փոխհարաբերությունները Աստված չի նախատեսել, որ մենք պետք է ընտրենք ըստ մեր քմահաճույքի «այնպեղ» գտնվող շատ Քրիստոնյաների միջից: Այլ այս փոխհարաբերությունները նախատեսել է սովորական միս ու արյուն ունեցող, մեր ուրբերը փրոքող մարդկանց հետ հաստատելու համար:

Ինչո՞ւ եմ անհանգստանում այս հարցի շուրջ, որ եթե դուք ձեզ Քրիստոնյա եք համարում, բայց ձեր հաճախած տեղական եկեղեցու անդամը չեք, ուրեմն հնարավոր է դուք դժողք եք գնում: Ինձ հետ միասին մի պահ մտածեք, թե ինչ է Քրիստոնյան:

### ***Ի՞նչ է Քրիստոնյան***

Քրիստոնյան մարդ է, որն առաջին հերթին և ամենակարևորը, Տիտու Քրիստոսի միջոցով ներվել է իր մեղքից և հաշտվել Նոր Աստծո հետ: Սա տեղի է ունենում, երբ մարդն ապաշխարում է իր մեղքերից և հավատում Տիտու Քրիստոսի՝ Աստծո Որդու, ապրած կատարյալ կյանքին, փոխանորդական մահվանը և հարությանը:

Այլ խոսքերով, Քրիստոնյան մարդ է, որը հասել է իր անձի և իր բարոյական ռեսուրսների ավարտին: Նա գիտակցել է, որ ինքը Աստծո հստակ ներկայացված օրենքի համաձայն, իր կյանքը նվիրել է սիրելու և երկրպագելու ավելի շատ ստացվածքին, քան Աստծուն. այնպիսի ստացվածք, ինչպիսիք են՝ կարիերան, ընտանիքը, փողով գնվող ապրանքները, ուրիշների կարծիքները, իր ընտանիքի և հասարակության պատիվը, այլ կրոնների այսպես կոչված աստվածների հաճությունը, այս աշխարհի ոգիները և անգամ այն բարի գործերը, որ տվյալ մարդը կարող է անել: Նա նաև հասկացել է, որ այս «կուռքերը» կրկնապատիկ անիժյալ վարպետներ են: Նրանց ախորժակը երբեք *այս կյանքում* չի բավարարվում: Եվ նրանք գրգռում են Աստծո արդար բարկությունը *հաջորդ կյանքի* համար. մահ և

դաբասարան, որոնք Քրիստոնյաները արդեն համարենել են որոշ չափով (ողորմածությամբ) այս աշխարհի նեղությունների մեջ:

Ուստի Քրիստոնյան գիտի, որ եթե նա մահանար այս գիշեր և կանգներ Աստծո առջև, և եթե Աստված նրան ասեր. «Ինչո՞ւ պետք է թողնեմ քեզ իմ ներկայության մեջ», ապա Քրիստոնյան պետք է ասեր. «Դու չպետք է ինձ ներս թողնեիր: Ես մեղք եմ գործել և Քեզ պարտք եմ, որը չեմ կարող վճարել»: Սակայն նա այսպեղ չպետք է կանգ առներ: Նա պետք է շարունակեր. «Մինչդեռ Քո մեծ ողորմության և խոստումների շնորհիվ, ես վստահում եմ Տիսուսի Քրիստոսի արյանը, որը թափվել է ինձ համար որպես փոխհատուցում, վճարելով իմ բարոյական պարտքը, բավարարելով Քո սուրբ և արդար պահանջները, և հեռացնելով մեղքի հանդեպ ունեցած Քո բարկությունը»:

Քրիստոսով արդարացած լինելու այս հայտարարության հիման վրա Քրիստոնյան մարդ է, որը գրել է մեղքի գերությունից ազատության սկիզբը: Մինչ կուռքերն ու այլ աստվածները երբեք չեն հազնում, նրանց սրամոքսները երբեք չեն կշտանում, Քրիստոսի գործի մեջ Աստծո բավարարությունը նշանակում է, որ Կրիստոսը, որը Քրիստոսի կատարած գործի շնորհիվ գնվել է դաբասարարությունից և այժմ ազատ է: Առաջին անգամ Քրիստոնյան ճաշակում է այս ազատությունը, երբ շրջվում է մեղքից, ոչ թե պարզապես այս ստրկական մեղքը մեկ ուրիշով փոխարինելու համար, այլ հանուն Տիսուս Քրիստոսի և իր կյանքը Քրիստոսի ղեկավարությանը հանձնելու համար Սուրբ Տոգուց փրկված ցանկությամբ: Մինչ Ադամը փորձում էր Աստծուն Իր գահից ցած բերել և ինքը նստել որպես Աստված, Քրիստոնյան ցնծում է, որ Քրիստոսը գահի վրա է: Նա մտածում է Քրիստոսի կյանքի կատարյալ հնազանդության շուրջ՝ Տոբ կամքին և խոսքերին, և փորձում իր Փրկչին նմանվել:

Այսպիսով Քրիստոնյան մեկն է, որն առաջին հերթին հաշտվել է Աստծո հետ Քրիստոսի միջոցով: Քրիստոսը մեղմացրել է Աստծո բարկությունը, և այժմ Քրիստոնյան Աստծո առջև հռչակված է արդար, կանչված է արդարության կյանքի համար, և ապրում է մի օր երկնքում Մեծն Թագավորի առջև կանգնելու հույսով:

Այնուհանդերձ սա դեռ ամենը չէ: Երկրորդը, Քրիստոնյան մարդ է, որն Աստուծո հետ իր հաշտության արժանիքով նաև հաշտված է Աստուծո ժողովրդի հետ: Նիշում էք Աստվածաշնչյան առաջին պարամությունը Ադամի ու Եվայի անկումից և պարտեզից վարավելուց հետո: Դա մարդասպանության մի պարամություն է՝ Կայենը սպանում է Աբելին: Եթե Աստուծոն Իր գահից իջեցնելու փորձը իրականում մեզ այնպեղ դնելու փորձ է, ուրեմն մենք ընդհանրապես թույլ չենք փա, որ մեկ այլ մարդ մեզնից այն վերցնի: Ոչ մի դեպքում: Աստուծո հետ Ադամի ունեցած իր փոխհարաբերության խզումը հանգեցրեց բոլոր մարդկային էակների միջև եղած փոխհարաբերության անմիջական խզման: Ամեն մարդ իր գլխի վերն է:

Զարմանալի չէր, որ Նիսուսը հետագայում սասց, որ «այս երկու պարավիրանքից կախված են բոլոր Օրենքը և Մարգարեները. սիրի՛ր քո Տեր Աստուծոն քո բոլոր սրտովը, քո բոլոր անձովը և քո բոլոր մարտովը, և սիրի՛ր քո ընկերին քո անձի պես» (փես Մարթ. 22:34-40): Այս երկու պարավիրանները միմյանց շաղկապված են: Առաջինի արդյունքում ծնվում է երկրորդը, իսկ երկրորդը՝ առաջինի սպացույցն է:

Ապա ուրեմն Քրիստոսի միջոցով Աստուծո հետ հաշտություն ունենալ նշանակում է հաշտված լինել բոլոր այն մարդկանց հետ, որոնք հաշտված են Աստուծո հետ: Եփեսացիների 2-րդ գլխի առաջին մասում Նիսուս Քրիստոսի միջոցով Աստուծո փված մեծ փրկության մասին նկարագրելուց հետո Պողոսը Եփեսացիների 2-րդ գլխի երկրորդ մասում անցում է կարարում նկարագրելու, թե ինչ նշանակություն ունի դա Նրեաների և Նեթանոսների միջև փոխհարաբերության մեջ, և իր լայն իմաստով, բոլոր Քրիստոսի մեջ եղող մարդկանց միջև փոխհարաբերության մեջ: Նա գրում է.

Որովհետև Նա է մեր խաղաղությունը, որ երկուսին մեկ դարձրեց և մեջբերելի բաժանման պարքը բանդեց, թշնամությունն Իր մարմնով կործանելով՝ կանոններով փրված պարավիրանների Օրենքը խափանեց, որպեսզի Իրենով երկուսից մի նոր մարդ սրեղծի՝ խաղաղություն հասարելով, և մեկ մարմնում խաչի միջոցով երկուսին էլ հաշտեցնի Աստուծո հետ՝ դրանով թշնամությունն սպանելով (Եփես.2:14-16):

Այժմ, բոլոր նրանք, որ պատկանում են Աստծուն «համաքաղաքացիներ» և «Աստծո ընտանիքի անդամներ» են (հ.19): Մենք «միասին հարմարված /կցված/» ենք Քրիստոսով մեկ «սուրբ տաճար» լինելու (հ. 21). այնքան շատ են այսպիսի նմանությունները, որոնցից կարող ենք ընտրել:

### ***Մեկ Ընտանիք, մեկ Նադորդակցություն և մեկ Մարմին***

Գուցե ընտանիքի նմանության շուրջ խորհրդածելը կօգնի մեզ տեսնելու, որ Աստծո հետ հաշտված լինել նաև նշանակում է հաշտվել Իր ժողովրդի հետ: Եթե դու որք ես, դու ինքդ չես ընտրում քո ծնողներին, նրանք են որդեգրում քեզ: Եթե քեզ որդեգրող ծնողների ազգանունը Վարդանյան է, հիմա դու մասնակցում ես Վարդանյանների փան ճաշին՝ ծնողներիդ և նրանց զավակների հետ: Դու քնում ես Վարդանյանների ննջասենյակում՝ նրանց զավակների հետ: Երբ ուսուցիչը դպրոցում ներկաներին է կանչում և հնչում է Վարդանյան ազգանունը, դու ձեռք ես բարձրացնում ինչպես նախկինում քո մեծ եղբայրն է արել և ինչպես կանի քո փոքրիկ բույրիկը քեզանից հետո: Եվ դու այսպես ես անում ոչ թե, որ ինքդ ես ընտրել «Վարդանյան» խաղալու դերը, այլ քանի որ ինչ-որ մեկը մի օր գնաց մանկարուն և ասաց, «Դու կլինես Վարդանյան»: Այդ օրվանից դու դարձար այդ մարդու որդին և նրա զավակների եղբայրը (կամ բույրը):

Միայն թե քո ազգանունը Վարդանյան չէ, այլ *Քրիստոնյա*, կոչված այն Մեկի պատվին, որը քեզ որդեգրել է՝ Քրիստոսի (Եփես. 1:5): Նիմա դու Աստծո ամբողջ ընտանիքի մի մասն ես կազմում: «Քանի որ թե՛ Սրբողը և թե՛ սրբվողները, բոլորը Մեկից են, այդ պատճառով էլ Նա չի ամաչում նրանց եղբայրներ կոչել» (Եբր.2:11):

Եվ սա իր ֆունկցիայից դուրս ինչ-որ մի ընտանիք չէ, որի անդամները մեկը մյուսից օտարացած են: Այն հաղորդակցվող է: Երբ Աստծո «միջոցով կանչվեցիք Իր Որդու՝ մեր Տեր Նիսուս Քրիստոսի հաղորդակցությանը» (1 Կորնթ.1:9), Նա նաև կանչեց ձեզ ամբողջ ընտանիքի հետ «հաղորդակցության» (1 Կորնթ.5:2):

Եվ սա պաշտոնական, քաղաքավարի հաղորդակցություն չէ: Այն մի մարմին է՝ կապակցված մեր անհատական որոշումների միջոցով, բայց նաև մարդկային որոշումներից շարք ավելի վեր՝ մարդու և Քրիստոսի կատարած գործի միջոցով կապակցված: Ձեր կողմից այնքանով անմտություն կլինեք, եթե ասեիք, «Ես ընդամենի անդամ չեմ», որքանով որ ձեր իսկ ձեռքը կամ քիթը կտրեիք: Ինչպես Պողոսն է ասում Կորնթացիներին, «Աչքը չի կարող ձեռքին ասել. «Ինձ պետք չես», կամ էլ գլուխն ասի ոտքերին, թե «Ինձ պետք չեք» (1 Կորթ. 12:21):

Ննարավոր չէ հակիրճ պատասխանել *ինչ է Քրիստոսյան* հարցին, առանց չանրադատնալու եկեղեցու մասին խոսակցությանը. ամեն դեպքում Աստվածաշնչում այդպես է: Ոչ միայն դա. եկեղեցու իմաստը բացատրելու համար դժվար է կառչել միայն մեկ համեմատությունից, քանի որ Նոր Կտակարանը կիրառում է բազմաթիվ համեմատություններ՝ ընդամենի և հաղորդակցությունը, մարմինը և հարսը, մարդը և փաճարը, կինը և նրա երեխաները: Եվ երբեք Նոր Կտակարանը չի քաջալերում շարունակ եկեղեցու հաղորդակցությունից *դուրս* պայմաններում Քրիստոսյան գոյարևումը: Եկեղեցին իրականում փրկանք չէ: Այն Աստծո ժողովուրդն է Քրիստոսի մեջ:

### ***Միանալ գործող եկեղեցու***

Երբ մարդը Քրիստոսյան է դառնում, նա պարզապես չի միանում ինչ-որ մի փրկական եկեղեցու, քանի որ դա հոգևոր հասունությամբ աճելու համար լավ սովորություն է: Նա միանում է փրկական որևէ եկեղեցու, քանի որ դրանով արտահայտում է այն, ինչ Քրիստոսը *դարձրել է իրեն*՝ Քրիստոսի մարմնի անդամ: Միաբանվել Քրիստոսի հետ նշանակում է միաբանվել բոլոր Քրիստոսյաններին: Սակայն այդ փիեզերական միաբանությունը պետք է կյանքի կոչվի փրկական եկեղեցում:

Երբևեմն աստվածաբանները սահմանում են փիեզերական եկեղեցու (ամբողջ պատմության ընթացքում Քրիստոսյաներն ամենուրեք) և փրկական եկեղեցու (այն մարդիկ, որոնք հանդիպում են ձեր փողոցի վրա եղող եկեղեցում լսելու Աստծո Խոսքի քարոզչությունը,

մկրպվելու ու ընդունելու Նադորդություն) միջև եղած փարբերությունը: Նոր Կտակարանում Տիեզերական եկեղեցուն վերաբերող մի քանի համարներից բացի (ինչպիսիք են Մատթ.16:18 և Եփեսացիներին ուղղված նամակի մեծ մասը), եկեղեցուն ուղղված հիմնական խոսքերը վերաբերում են Կրեղական եկեղեցուն, ինչպես Պողոսն է գրում, «Կորնթոսում եղող Աստուծո եկեղեցուն» կամ «Գաղափայտում եղող եկեղեցիներին»:

Այժմ այն ինչ պիտի խոսենք մի քիչ դժվարամասն է, սակայն ոչ քիչ կարևոր: *Տիեզերական եկեղեցուն մեր անդամության և Կրեղական եկեղեցուն մեր անդամության* միջև գոյություն ունեցող կապը շատ նման է այն *արդարությանը, որն Աստված փառի է մեզ հավատքի միջոցով և մեր ամենօրյա կյանքում արդարության գործնական դրսևորմանը*: Երբ հավատքի միջոցով մենք դառնում ենք Քրիստոնյաներ, Աստված մեզ արդար է հռչակում: Մինչդեռ մենք կանչված ենք *լինելու* մեր կյանքով արդար: Մի մարդ, որն ուրախությամբ շարունակում է ապրել անարդարության կյանքով, հարց է ծագում, թե արդյո՞ք ինքը ընդհանրապես Քրիստոսի արդարության ժառանգակիր հաղիսացել է, թե ոչ (Կրն Նոմ.6:1-18; 8:5-14; Նակ.2:14-15): Այսպես էլ այն մարդիկ են, որոնք չեն ցանկանում նվիրվել որևէ Կրեղական եկեղեցու: Տեղական եկեղեցուն նվիրվելը բնականոն արդյունք է. այն հաստատում է, թե ինչ է արել Քրիստոսը: Եթե ձեզ իրականում չի հետաքրքրում նվիրվելու Ավետարանին հավատացող, Աստվածաշունչը ուսուցանող Քրիստոնյաների մի որևէ ակտիվ խմբի, սպա ինքներդ ձեզ հարց ուղղեք, թե արդյոք ընդհանրապես պատկանում եք Քրիստոսի մարմնին: Ուշադիր լսեք Երբայեցիներին ուղղված նամակի հեղինակին.

Անխափառ պահենք մեր հույսի դավանանքը, առանց փափանվելու, որովհետև հավատարիմ է Խոստացողը: Եվ իրար համար հոգ փանենք՝ սիրո և բարեգործության մղելով: Եվ մեկտեղ հավաքվելը չթողենք, ինչպես ոմանց սովորությունն է, այլ միմյանց հորդորենք. և այնքան ավելի, որքան քննում եք, որ օրը մտնում է: Որովհետև, եթե ճշմարտության գիտությունը ընդունելուց հետո դիտավորյալ մեղք գործենք, նրանից հետո այլևս մեղքերի համար գոհ չի մնում, այլ՝ դատաստանի զարհուրելի սպասումը և

կրակի բարկությունը, որ լափելու է հակառակորդներին:  
(Եբր.10:23-27)

Աստուծո առաջ մեր դիրքը, եթե անկեղծ է, կարգապահության մեր ամենօրյա որոշումների միջոցով, եթե անգամ այդ ընթացքը դանդաղ է և լի է սխալ քայլերով: Աստված իրոք փոխում է իր ժողովրդին: Արդյո՞ք դա հրաշալի լուր չէ: Ուստի խնդրում են, սիրելի բարեկամ, մի՛ ապրիր ինքնագոհ կյանքով ինչ-որ անորոշ գաղափարով, որ դու ունես Քրիստոսի արդարությունը, եթե անգամ չես հեղձվում արդարության կյանքին: Նմանապես, խնդրում են մի՛ խաբվիր փեղերական եկեղեցու անորոշ հասկացությամբ, որին դու պատկանում ես, եթե դու չես հեղձվում այդ կյանքին մի որևէ գործող եկեղեցու միանալով:

Բացառությամբ որոշ հազվադեպ իրավիճակների, ճշմարիտ Քրիստոսյան իր հոգևոր կյանքի մեջ աճում է փեղական եկեղեցում այլ հավաքացյալների հետ հաղորդակցության միջոցով: Նա գիտի, որ դեռ չի «հասել»: Նա դեռևս ընկած է և կարիք ունի հաշիվ փակելու և խրատվելու այն փեղական համայնք կազմող մարմնի միջոցով, որը կոչվում է եկեղեցի: Իսկ նրանք էլ իր կարիքն ունեն:

Երբ մենք հավաքվում ենք երկրպագելու Աստծուն և սեր ու բարի գործեր ցուցաբերելու միմյանց հանդեպ, դու կարող ես փեղանել, որ իրական կյանքում ապացուցում ենք այն փաստը, որ Աստված հաշվեցրել է մեզ իր հետ և միմյանց հետ: Մենք աշխարհին ապացուցում ենք, որ մենք *փոխվել ենք*, ոչ թե առաջնահերթ, այն պատճառով, որ անգիր ենք սովորում Աստվածաշնչյան համարներ, աղոթում ենք հաց ուրելուց առաջ, մեր վաստակած գումարից փաստանորդ ենք փակել և լսում ենք Քրիստոսնական ռադիոհաղորդումներ, այլ քանի որ ավելի կամեցողություն ենք ցուցաբերում հաշվելու, ներելու և նույնիսկ սիրելու մի շարք մեղավոր մարդկանց:

Ես և դու չենք կարող սեր, ուրախություն, համբերություն կամ բարություն ցուցաբերել մի ինչ-որ կողմում լրիվ միայնակ նստելով: Ո՛չ, մենք այդ ամենը արտահայտում ենք, երբ այն մարդիկ, որոնց մենք նվիրվել ենք սիրելու, հանկարծ լավ առիթներ են փակել նրանց *չսիրելու*, այնուհանդերձ մենք սիրում ենք նրանց:

Դուք հիմա րեսնո՞ւմ եք դա: Նենց այնպեղ, որպեղ մի խումբ մեղավոր մարդիկ նվիրվել են իրար սիրելու, հենց այնպեղ է, որ երևում է Ավետարանը: Եկեղեցին ներկայացնում է Ավետարանը րեսանելի կերպով, երբ մենք ներում ենք միմյանց, ինչպես Քրիստոսը մեզ ներեց, երբ մենք նվիրվում ենք միմյանց, ինչպես Քրիստոսը մեզ նվիրվեց և երբ մեր կյանքն ենք դնում միմյանց համար, ինչպես Քրիստոսը Իր կյանքը դրեց մեր համար:

Միասին մենք կարող ենք ցույց րալ Նիսուս Քրիստոսի Ավետարանը այնպես, որը ինքնուրույն պարզապես չէինք կարող:

Ես հաճախ եմ լսում Քրիստոնյաներին խոսելիս իրենց հոգևոր պարզևների մասին: Մինչդեռ հեղաքրքիր է, թե որքան հաճախ են մարդիկ հասկանում այն փաստը, որ Աստված հատուկ է այդքան շատ պարզևներ րալիս, որպեսզի դրանք օգտագործվեն ի պատասխան եկեղեցու մյուս Քրիստոնյաների մեղքին: Իմ մեղքերը քեզ հնարավորություն են րալիս գործածելու քո պարզևները:

Ուրեմն հավաքիր մի խումբ կանանց և րղամարդկանց, երիտասարդ ու ձեր, սևամորթ ու սպիտակամորթ, Ասիացի ու Աֆրիկացի, հարուստ և աղքատ, կրթված և անկիրթ, իրենց բազմազան րաղանդներով ու պարզևներով: Միայն համոզվիր, որ *նրանք բոլորն էլ* գիտեն, որ հիվանդ են մեղավոր, և միմիայն շնորհքով են փրկված: Ի՞նչ ունեք: Դուք ունեք եկեղեցու շինանյութը:

Եթե ձեր նպատակն է սիրել *բոլոր* Քրիստոնյաներին, թույլ րվեք ձեզ առաջարկել այդ ուղղությամբ աշխատելու համար առաջին հերթին նվիրվելու մի որևէ սրույց *իրական* Քրիստոնյաների խմբի՝ բոլոր իրենց թերություններով և առավելություններով հանդերձ: Նվիրվիր նրանց երկար ու կարճ ութսուն րարիների ընթացքում: Ներո կգաք ինձ մոտ և մենք կխոսենք ամենուրեք բոլոր Քրիստոնյաներին սիրելու ձեր հաջողության մասին:

## ***Նաշվեղություն րալ***

Ուրեմն ո՞վ է պատասխանատու մրածելու, թե ինչպիսին պեղք է լինի եկեղեցի կոչվող մարդկանց հավաքույթը: Արդյո՞ք հովիվները և եկեղեցու առաջնորդները: Անկասկած: Իսկ ի՞նչ կասեք յուրաքան-



յյոր Քրիստոնյայի մասին: Անշո՛ւշտ: Քրիստոնյա լինել նշանակում է հոգ փանել Քրիստոսի մարմնի՝ եկեղեցու, կյանքի և առողջության մասին: Դա նշանակում է հոգալ, թե ինչ է եկեղեցին և ինչ պետք է լինի, քանի որ դու պատկանում ես եկեղեցուն որպես Քրիստոնյա:

Իհարկե, մենք հոգ ենք փանում եկեղեցու համար, քանի որ այն հենց մեր Փրկչի մարմինն է: Ուշադրություն դարձրե՛լ եք Տիտուսի այն խոսքերին, որով դիմում է Քրիստոնյաներին հալածող Սողոսին՝ հեփազայում Պողոս կոչվող, երբ Դամասկոսի ճանապարհին հանդիպում է նրան: «Սողո՛ս, Սողո՛ս, ինչո՞ւ ես ինձ հալածում» (Գործք 9:4): Տիտուսը եկեղեցու հետ այնքան սերտորեն է կապված, որ դիմում է եկեղեցուն որպես թե Իր անձին: Քրիստոնյա՛, արդյո՞ք դու քեզ այդքան նմանեցնում ես այն մարդկանց, որոնց քո Փրկիչը նմանեցնում է իրեն: Արդյո՞ք քո սիրտը վառվում է Նրա սրտի փափագներով:

Վերջերս մի հովվից նամակ էի ստացել, որն իր նամակում արքահայտում էր իր ցանկությունը, որ իր եկեղեցու անդամներն իմանան, թե ինչպիսին պետք է լինի եկեղեցին: Այս խոնարհ մարդը ուզում էր մի եկեղեցի, որը կօգնի իրեն հաշվետու լինելու՝ մինչ ինքը կառաջնորդի իրենց շնորհքի և աստվածաշարժության մեջ: Այս հովիվը հասկանում էր Նոր Կրակարանյան ձևաչափը: Նա հասկանում էր, որ մի օր Աստված կանչելու է իրեն հաշվետու լինելու, թե իրնչպես է հովվել իր համայնքը: Եվ որպես հավաքարիմ հովիվ նա ուզում էր, որ իր հոգի յուրաքանչյուր գառնուկ իմանա, որ մի օր նրանք նույնպես կանչվելու են հաշիվ փալու, թե ինչքանով են սիրել իրար և իրեն:

Աստված մարմնի յուրաքանչյուր անդամի հարցնելու է, «Դու ուրախացա՞ր մարմնի մյուս անդամների հետ, երբ նրանք ուրախացան: Դու սզացի՞ր նրանց հետ, ովքեր սզացին: Ավելի թույլ անդամների հետ վերաբերվեցի՞ր որպես պետքական անդամների, և արդյո՞ք հապուկ պարիվ ցուցաբերեցիր այն անդամներին, որոնց շարժերը կարծում են ավելի քիչ պատվարժան: Արդյո՞ք կրկնակի պատվի արժանացրի՞ր նրանց, ովքեր առաջնորդում և սովորեցնում էին քեզ» (Կրն 1 Կորն.12:22-26 և 1 Տիմ.5:17):

Քրիստոնյա՛, արդյո՞ք պատրաստ ես այն օրվան, երբ Աստված կկանչի քեզ հաշվետու լինելու այն բանի համար, թե ինչպես սիրեցիր և ծառայեցիր եկեղեցու ընտանիքին, ներառյալ քո եկեղեցու առաջնորդները: Դու գիտե՞ս ինչ է ասում Աստված, թե ինչպիսին պետք է լինի եկեղեցին:

Եվ հովի՛վ, դուք պատրաստել եք ձեր հոգին իրենց հաշվետվություն փախու օրվան, սովորեցնելով նրանց, թե ինչպիսին պետք է լինի եկեղեցին: Դուք սովորեցրե՞լ եք նրանց, որ Ավետարանին ձեր հավատարմության համար նրանք հաշվետու են լինելու:

Գ Լ Ո Ւ Խ Ե Ր Կ Ո Ւ

## ԻՆՉ Է ԵԿԵՂԵՑԻՆ... ԵՎ ԻՆՉ ՉԷ

**Ներածության մեջ** ես հարցրեցի, թե ինչ եք փնտրում եկեղեցում, ինչպես նաև ինչ է ասում Աստվածաշունչը, թե ինչպիսին պետք է լինի եկեղեցին, սակայն չպարասխանեցի այս հարցերին: Կասկած չկա, որ սրանք դժվար հարցեր են: Եվ այսօր Քրիստոնյաները եկեղեցում փնտրում են ամեն տեսակ տարբեր բաներ:

### *Վրդովեցնող գրույց*

Իմ ավարտական տարվա ընթացքում ես հիշում եմ ընկերոջս հետ ունեցած մի գրույց, որն աշխատում էր մի Քրիստոնեական ծառայության մեջ, որն իր հերթին ոչ մի եկեղեցու չէր պատկանում: Ես և նա հաճախում էինք միևնույն եկեղեցին արդեն մի քանի տարի: Սակայն երբ ես միացա եկեղեցուն որպես անդամ, իմ ընկերը չմիացավ: Իրականում նա միայն գալիս էր կիրակի առավոտյան պաշտամունքին և ծառայության կեսից՝ հենց այն ժամանակ, երբ քարոզը պետք է սկսվեր, դուրս էր սողոսկում:

Մի օր որոշեցի հարցնել նրան իր կես սրտով հաճախելու պատճառը: «Ես իրականում ոչինչ չեմ ստանում ծառայության մնացած մասից», պարասխանեց նա:

«Դու երբևէ մտածե՛ր ես եկեղեցուն միանալու մասին», հարցրեցի ես:

Թվում էր նա իսկապես զարմացավ իմ հարցից և պարասխանեց. «Միանամ եկեղեցո՞ւն: Ճիշտն ասած չգիտեմ, թե ինչու պետք է դա անեն: Ես գիտեմ, թե ինչու եմ այսպեղ, իսկ այդ մարդիկ իմ կյանքը ավելի կդանդաղեցնեն»:

Ինչքանով, որ ես հասկացա, նա այդ խոսքերը չսասաց արհամարհանքով, այլ փորձառու ավերարանչի անկեղծ նախանձախնդրությամբ, որը չէր ուզում ոչ մի ժամ վարենել Տիրոջ ժամանակից: Նա որոշակի կարծիքներ հայտնեց այն մասին, թե ինչ էր փնտրում եկեղեցում: Իրականում դրանում ներգրավված չէին եկեղեցու և ոչ մի անդամ, ամեն դեպքում ոչ այդ եկեղեցու: Նա ուզում էր մի րեղ, որպեղ նա կարող էր լսել Աստծո Խոսքից մի լավ քարոզ և սրանալ շարաթվա համար իր հոգևոր լիցքավորումը:

Մինչդեռ նրա խոսքերը արձագանքում էին իմ ուղեղում՝ «այդ մարդիկ իմ կյանքը ավելի կդանդաղեցնեն»: Շարք բաներ կային, որ ուզում էի նրան ասել, սակայն միայն այսքանն ասացի. «Բայց երբևէ մտածե՛ր ես այն մասին, որ եթե այդ մարդկանց ձեռքերը բռնես, այո, ճիշտ է նրանք հնարավոր է դանդաղեցնեն քո ընթացքը, բայց դու կարող ես օգնել նրանց արագ առաջ գնալու: Մտածե՛ր ես երբևէ, որ դա կարող է լինել Աստծո ծրագրի մի մասը նրանց և քո համար»:

Ես նույնպես ուզում էի մի այնպիսի եկեղեցի, որպեղ ամեն կիրակի կարող էի լսել լավ քարոզ: Սակայն «Քրիստոսի մարմին» բառերի նշանակությունը շարք ավելին է, քան միայն այսքանը, այնպես չէ՛:

### ***Մարդիկ, և ոչ թե վայր***

Ինչպես նշեցի առաջին գլխում, եկեղեցին վայր չէ: Այն կառույց չէ: Այն քարոզարեղի չէ: Այն հոգևոր ծառայություն ասպահովող չէ: Այն մարդիկ են՝ Նոր Ուխտի արյամբ գնված Աստծո ժողովուրդը: Այդ իսկ պարճատով էլ Պողոսն ասում է. «Քրիստոսն էլ սիրեց եկեղեցուն և Իր անձը տվեց նրա համար» (Եփես.5:25): Նա Իր կյանքը չտվեց ինչ-որ րեղի համար, այլ մարդկանց համար:

Այդ իսկ պատճառով այն եկեղեցին, որտեղ ես հովիվ եմ, կիրակի առավոտյան հավաքույթը սկսում է ոչ թե ասելով, «Բարի գալուստ Կապիտոլ Նիլի Մկրտական Եկեղեցի», այլ «Բարի գալուստ Կապիտոլ Նիլի Մկրտական Եկեղեցու *այս հավաքույթին*»: Մենք մարդիկ ենք, որոնք հավաքվում են: Այո, սա մի փոքր բան է, սակայն մենք փորձում ենք մատնացույց անել մի մեծ իրականություն անգամ այն բառերով, որով ողջունում ենք մարդկանց:

Նիշելով, որ եկեղեցին մարդիկ են, այն կօգնի մեզ գիտակցել, թե որն է կարևոր և որը՝ ոչ: Օրինակ, ինձ համար փորձություն է եկեղեցու մասին երաժշտության ոճի միջոցով պարկերացում կազմելը: Ի վերջո եկեղեցում գործող երաժշտության ոճն առաջին բանն է, որ ցանկացած եկեղեցում աչքի է ընկնում, և մենք հակված ենք երաժշտությանն արձագանքելու շար գգացմունքայնորեն: Երաժշտությունը որոշակի *զգացմունքներ* է առաջացնում մեր մեջ: Մինչդեռ ի՞նչ կարող է այն ասել Քրիստոսի և Նրա ժողովրդի հանդեպ իմ սիրո մասին, եթե որոշեմ թողնել եկեղեցին այդպեղ կիրառվող երաժշտության ոճի պատճառով: Կամ, եթե մի եկեղեցի հովվելիս նսեմացնեմ իմ համայնքի մեծամասնությանը, քանի որ մտածում եմ, որ երաժշտության ոճն արդեն պետք է արդիականացնել: Առնվազն կարող ենք ասել, որ ես մոռացել եմ, որ եկեղեցին իրականում մարդիկ են և ոչ թե վայրը:

Միևնույն ժամանակ Աստվածաշունչը սովորեցնում է, որ Քրիստոնյաները պետք է հոգ տանեն այն մասին, թե ինչ է տեղի ունենում եկեղեցում՝ ինչ է այն *անուր*: Այս գրքի մնացած մասը նվիրված է այսպիսի բննարկումներին:

Ինչպես ենք բալանսի բերում այս երկուսը՝ մարդկանց մասին և միաժամանակ նրանց արարքների մասին հոգալը: Եթե այս գիրքը լիներ Քրիստոնեական ընդանիքներ կառուցելու վերաբերյալ, ապա կխոսեինք որոշակի բաներ *անելու* մասին, ինչպես օրինակ՝ միասին ճաշելու, Մուրբ Գիրքը կարդալու, միասին ուրախանալու, միմյանց համար աղոթելու և այլն: Մինչդեռ ամբողջ բննարկման ընթացքում հույսով եմ բոլորս էլ կհիշենք, որ ծնողներն էլ սխալներ են գործում և երեխաներն էլ մնում են երեխաների պես: Ընդհանրապես միայն ինչ-որ հաստատություն չէ. այն մարդկանց խումբ է:

Եկեղեցում էլ այսպես է: Արդյո՞ք որևէ եկեղեցի չի արդարացնում ձեր սպասելիքներն իր գործերով, ինչպես օրինակ Աստվածաշնչի խոսքերին հետևելու կամ չհետևելու հարցում (հետագայում կխոսենք այս թեմայի շուրջ): Եթե այդպես է, ապա հիշեք, որ եկեղեցին մարդկանց խումբ է, որը դեռ շնորհիքի մեջ աճման ընթացքի մեջ է: Մի՞թե նրանց: Ծառայե՛ք նրանց: Նամբերաբար եղե՛ք նրանց հանդես: Կրկին անգամ, վերաբերվե՛ք նրանց որպես ընդամենի: Երբ ձեր ծնողները, հարազատները կամ երեխաները ձախողում են արդարացնել ձեր սպասումները, արդյո՞ք դուք նրանց հեռացնում եք ձեր ընդամենից: Նույնով եմ դուք ներում և համբերում եք նրանց: Ննարավոր է նույնիսկ մրաժում եք, որ ձեր սպասումները պետք է հարմարեցնեք նրանց հետ: Նմանապես, մենք պետք է ինքներս մեզ հարց փանք, թե արդյո՞ք մենք գիտենք ինչպես սիրենք և համբերենք եկեղեցու անդամներին, որոնք ունեն փարբեր կարծիքներ, որոնք ձախողում են արդարացնել մեր սպասումները, կամ միզուցե անգամ մեղք են գործում մեր հանդես: (Մի՞թե մենք ինքներս այնպիսի մեղք չենք գործել, որից հետո ներման կարիք ենք ունեցել):

Իհարկե, ինչ-որ փնտրելի սահման գոյություն ունի: Գոյություն ունեն որոշ եկեղեցիներ կամ հովիվներ, որոնց դուք չեք ուզի միանալ, կամ մնալ միացած: Մենք կվերադառնանք այս հարցին եկեղեցու հիմնական նշանների բաժնում: Եկեղեցու կազմավորման օրից ի վեր հիմնական սկզբունքը մնում է նույնը՝ եկեղեցին մարդիկ են: Եվ ինչ էլ, որ փնտրենք, կամ ինչ էլ ասենք, որ պետք է լինի եկեղեցին, պետք է առաջնորդվենք այս հիմնական, աստվածաշնչյան սկզբունքով:

### ***Մարդիկ և ոչ թե վիճակագրություն***

Թույլ փակե՛ք ևս մեկ հարց բարձրացնել եկեղեցու վերաբերյալ այն սխալ մրաժնակերպի մասին, որն իրականում ավելի փարածված է հովիվների մոտ: Եկեղեցին ոչ միայն վայր չէ, այլ նաև վիճակագրություն չէ:

Երբ սովորում էի ավագ դպրոցում, հիշում եմ մի անգամ կարդացի քաջալերական մի նամակ, որը գրել էր Ջոն Բրաուն անունով փասնիներորդ դարի մի հովիվ իր աշակերպներից մեկին, որը նոր

Էր հովիվ ձեռնադրվել մի փոքրիկ եկեղեցու համար: Նամակում Բրաունը գրում էր.

Ես գիտեմ թո սրբի փառասիրությունը և որ դու կվիրավորվես, որ թո եկեղեցին (համայնքը) շատ փոքր է համեմատած թո շուրջը գտնվող եղբայրների եկեղեցիների հետ. սակայն վստահիր տարեց մարդուս խոսքերին, որ երբ ժամանակը գա և դու կանգնես Տեր Նիսուսի դատաստանի գահի առջև նրանց համար հաշվեդու լինելու, դու կմտածես, որ դու բավականաչափ մարդիկ ունեիր:<sup>1</sup>

Երբ մտածում եմ այն համայնքի մասին, որի վրա Աստված ինձ պատասխանատու է դրել, ես գգում եմ Աստծո առջև հաշվեդու լինելու այդ օրվա ծանրությունը: Արդյո՞ք կուզեի եկեղեցին, որին հովվում եմ, ավելի մեծանար, դառնար ավելի հայտնի ու քննարկված, լիներ երևույթով ավելի ազդեցիկ եկեղեցի:

Արդյո՞ք ես շահագրգռված էի որևէ կերպ «համակերպվելու» կամ «հանդուրժելու» իմ պատասխանատվության ներքո գտնվող մի խումբ մարդկանց, մնալով իմ ժամանակի մեջ սպասել հնարավորությունների, որպեսզի եկեղեցին դարձնեմ այն, ինչ մտածում եմ, որ պետք է լինի: Այնպես չէ, որ եկեղեցու ապագայի համար երազանքներ ունենալը վատ է, սակայն արդյո՞ք իմ ցանկություններն առաջնորդում են ինձ լինելու անսպասելի և նույնիսկ ձանձրալի ներկայումս ինձ շրջապատող սուրբերի հանդեպ:

Կամ պե՞տք է արդյոք հիշել, թե ինչպիսի անորոշ ճակատագրով կարող են մնալ մի քանի տասնյակ հոգիներ, որոնց մեծամասնությունը տարեց մարդիկ են, որոնք արդեն ամեն կիրակի նստում են իմ առջև ու թ հարյուր հոգու համար նախատեսված բավականին մեծ սրահում: Արդյո՞ք ես կսիրեի ու կծառայեի այս քիչ թվով մարդկանց, եթե անգամ նրանց ոչ աստվածաշնչային հանձնաժողովները, հնաոճ սովորությունները և ոչ իմ նախընտրելի երգերի ընտրությունները խոչընդոտեին եկեղեցու համար իմ հույսերի ճանապարհը (կարծում եմ օրինական): Եվ ես գիտեմ, որ միայն հովիվները չեն, որ ընկնում են իրենց շրջապատող մարդկանց «հանդուրժելու», երկար ժամանակ համբերելու մինչև, որ եկեղեցին կդառնա այնպիսին, ինչպիսին նրանք են պատկերացնում, որ կարող է լինել:

Եկեղեցին մարդիկ են, ո՛չ թե վայր կամ վիճակագրություն: Այն մարմին է՝ կապակցված այն Մեկին, որը գլուխն է: Այն ընդհանր է, իրար հետ միավորված՝ Քրիստոսով որդեգրության միջոցով:

Աղոթում են, որ մենք՝ հովիվներս, ավելի շատ գիտակցենք մեր առեղծվածի պարասխանապվությունը մեզ վարահված հոյակերի հանդեպ, որոնց վրա Աստված մեզ դրել է հաշվետու հովիվներ:

Բայց նաև աղոթում են, որ դու՝ Քրիստոսայ, առաջնորդ լինես, թե հավաքքի մեջ մանուկ, ավելի շատ գիտակցես քո պարասխանապվությունը սիրելու, ծառայելու, քաջալերելու և հաշվետու լինելու քո եկեղեցու ընդհանրքի առջև: Ինչ վերաբերում է քո միս ու արյուն հանդիսացող հարագաբաններին, կարծում են դու արդեն հասկանում ես, թե որտեղ էր Կայենի սխալը, երբ Տիրոջը հեզմանքով ասաց. «Մի՛թե ես իմ եղբոր պահապանն եմ»: Սակայն նույնիսկ ավելին ես հույս ունեմ, որ դու հասկանում ես, եթե արդեն իսկ չես հասկացել, քո ավելի մեծ պարասխանապվությունը քո եկեղեցու ընդհանրքի եղբայրների և քույրերի հանդեպ:

Եվ Նրա շուրջը նստած մարդիկ Նրան ասացին, «Ահա՛ մայրդ և եղբայրներդ դրսում քեզ են ուզում»:

Նա պարասխանեց նրանց՝ ասելով, «Ո՛վ է Իմ մայրը, և ովքե՛ր են Իմ եղբայրները»: Ու Իր շուրջը նստածներին նայելով՝ ասաց, «Ահա Իմ մայրը և Իմ եղբայրները: Որովհետև, ով կարգաբանում է Աստծո կամքը, նա՛ է Իմ եղբայրը և Իմ քույրը և մայրը»: (Մարկ.3:32-35)



## ԻՆՉՊԻՍԻՆ ՊԵՏՔ Է ՉԳՏԻ ԼԻՆԵԼ ՑԱՆԿԱՑԱԾ ԵԿԵՂԵՑԻ. ԱՌՈՂՋ

**Եթե դուք Քրիստոնյա ծնող եք,** ի՞նչ եք դուք կամենում ձեր երեխաների համար: Եթե դու Քրիստոնյա երեխա ես, ի՞նչ ես կամենում քո ընտանիքի համար:

Նավանաբար դուք կամենում եք ձեր ընտանիքում տեսնել մի շարք լավ երևույթներ՝ սեր, ուրախություն, սրբություն, միաբանություն և ակնածանք Տիրոջից: Նստավոր է դուք մտածում եք նաև մի շարք ապրանքների մասին: Բայց եկեք ամփոփենք այս բոլոր հարկանիշները մեկ, բայց ոչ այնքան ոգևորիչ բառով՝ *առողջ*: Դուք ուզում եք առողջ ընտանիք. ընտանիք, որն աշխատում է, ապրում և սիրում միասին, ինչպես որ Աստված է նախասահմանել ընտանիքի համար:

Այդպես էլ մեր եկեղեցիների դեպքում է: Ես առաջարկում եմ, որ Քրիստոնյաները՝ հովիվները և եկեղեցու անդամները, փափազեն ունենալ առողջ եկեղեցիներ:

Միգուցե կա ավելի լավ բառ նկարագրելու, թե ինչպիսին պետք է լինի եկեղեցին, քան «առողջ» բառն է: Վերջ ի վերջո, մենք խոսում ենք մարդկանց մասին, որոնք գնվել են հավիտենական Որդու, Թագավորների Թագավորի և Տերերի Տիրոջ արշամբ. արդյո՞ք «առողջ»-ը այն ճիշտ բառն է, որն ընտրել եմ կիրառելու: Ամեն դեպքում ես սիրում եմ *առողջ* բառը, քանի որ այն փոխանցում է մարմնի հասկացությունը, որն ապրում է և աճում ինչպես որ հարկն է: Այն կարող է ունենալ իր բաժին խնդիրները: Այն դեռևս կատարելության

չի հասել, սակայն հասնելու գործընթացում է: Այն անում է այն, ինչ պահանջվում է, քանի որ Աստուծո Խոսքն է նրան առաջնորդում:

Ես հաճախ եմ իմ համայնքին ասում, որ երբ կանգնած ենք լինում մեր կյանքում գոյություն ունեցող մեղքի դեմ պայքարելու առջև, Քրիստոնյաների և ոչ Քրիստոնյաների միջև փարբերությունն այն չէ, որ ոչ Քրիստոնյաները մեղանշում են, իսկ Քրիստոնյաները՝ ոչ: Տարբերությունն այն է, թե որ կողմում ենք մենք կանգնում պայքարի ժամանակ: Քրիստոնյաները կանգնում են Աստուծո կողմում մեղքի դեմ, մինչդեռ ոչ Քրիստոնյաները կանգնում են մեղքի կողմում՝ Աստուծո դեմ: Այլ կերպ ասած, Քրիստոնյան կմեղանջի, սակայն հերոս կդառնա Աստուծուն և Իր Խոսքին ու կասի. «Օգնի՛ր ինձ պայքարելու մեղքի դեմ»: Ոչ Քրիստոնյան անգամ, եթե գիտակցի իր մեղքը, նրա արձագանքը կլինի. «Ես իմ մեղքն ավելի եմ նախընտրում, քան Աստուծուն»:

Առողջ եկեղեցին կարարյալ ու առանց մեղքի եկեղեցին չէ: Այն դեռևս ամեն ինչում գլուխ չի հանում: Ավելի ճիշտ, այն մի եկեղեցի է, որն անընդհատ պայքարում է ամբարիշտ ցանկությունների և այս աշխարհի խաբեությունների դեմ, որպեսզի մեր մարմնի և չարի դեմ պայքարում Աստուծո կողմում լինի: Այն եկեղեցի է, որը մշտապես աշխատում է ապրել Աստուծո Խոսքի համեմատ:

Թույլ փվեք ձեզ փալու ավելի հստակ սահմանում և ապա կնայենք մի քանի սուրբ գրային հարվածների, որոնք աջակցում են այս սահմանմանը. *Առողջ եկեղեցին մի համայնք է, որն ավելի արտացոլում է Աստուծո բնավորությունը այնպես, ինչպես հայրնված է Իր Խոսքի մեջ:*

Ուրեմն, եթե մի հովիվ ինձ հարցներ, թե ինչպիսի եկեղեցի խորհուրդ կրայի նրան, որ ձգվեր ունենալ, ես նրան հնարավոր է ասեի. «Առողջ եկեղեցի, որն ավելի արտացոլում է Աստուծո բնավորությունը, ինչպես որ մեզ հայրնի է իր Խոսքի մեջ»:

Ո՛վ Քրիստոնյա, իսկ ինչպիսի՞ եկեղեցի հնարավոր է ձեզ խորհուրդ փայի, որին միանաք, որտեղ ծառայեք և համբերությամբ ձեր ընթացքը կարարեք: Առողջ եկեղեցի, մի եկեղեցի, որն ավելի արտացոլում է Աստուծո բնավորությունը այնպես, ինչպես հայրնված է մեզ իր Խոսքում:

Եթե դուք ուշադիր էիք կարդում, ապա նկատեցիք, որ ես շարունակ ասում էի «հնարավոր է»: Այս խոսքը երկու պատճառով էի կիրառում: Առաջինը, որ չեմ ուզում փրկվորություն սրեղծվի, որ սա *միակ* ճանապարհն է մեզ համար նկարագրելու, թե ինչպիսին պետք է լինեն եկեղեցիները: Տարբեր իրավիճակներ և պատճառներ հնարավոր է առաջ բաշեն փարբեր նկարագրություններ: Ինչ-որ մի հեղինակ հնարավոր է կամենա հակազդել եկեղեցիներում փրոող օրինապահությանը կամ ցովությանը, ուստի իր նկարագրությունը կսկսի ասելով. «Մեր եկեղեցիներում ամենակարևոր բանը խաչի քարոզությունն է»: Ես կասեմ «Ամեն» այս խոսքին: Կամ մեկ ուրիշ հեղինակ հնարավոր է կամենա հակազդել մեր եկեղեցիներում փրոող Աստծո Խոսքի պակասին, որի դեպքում նա կարող է առաջ բաշել եկեղեցիներում Աստծո Խոսքը կենտրոնական դիրքում լինելու կարևորությունը: Նորից, ես կասեմ՝ «Ամեն»:

Երկրորդը, ես չեմ ուզում փրկվորություն սրեղծվի, որ ինչ-որ մեկը չի կարող ավելի լավ սահմանել այն, ինչ փորձում եմ ձեզ բացատրել: Սա պարզապես այն լավագույն սահմանումն է, որը կարծում եմ հենց այն կարևոր աստվածաշնչյան նպատակն է, որին պետք է մենք հեղամուր լինենք մեր եկեղեցիներում՝ արտացոլել Աստծո բնավորությունը այնպես, ինչպես հայտնված է իր Խոսքում:

Ո՛ր Քրիստոնյան դա չէր ուզի:

### ***Կատարյալ սպառազինված***

Տրամաբանոր Աստծո բնավորության նկարագրությունն այնպես ինչպես իր Խոսքի մեջ է հայտնված նշանակում է սկսել Աստծո Խոսքով: Ինչո՞ւ դիմել հենց այս աղբյուրին և ոչ թե՛ «ինչ որ հարմար է» աղբյուրին, որոշելու համար, թե ինչ պետք է *անեն* կամ *լինեն* մեր եկեղեցիները: Եփեսոսի եկեղեցու հովիվ Տիմոթեոսին ուղղված իր երկրորդ նամակում Պողոսն ասում է, որ Աստվածաշունչը պետք է «սպառազինի նրան ամեն բարի գործերի համար»: Այլ կերպ ասած, գոյություն չունի որևէ բարի գործ, որի համար Աստծո Խոսքը չկարողանա սպառազինել Տիմոթեոսին կամ մեզ: Եթե կա որևէ բան, որ մեր եկեղեցիները մտածում են պետք է անեն կամ լինեն և այն *չեք*

*գրկնում* Աստծո Խոսքի մեջ, ապա Պողոս առաքյալը սխալվում էր, քանի որ այդ դեպքում հնարավոր չէր լինի ասել, որ Աստծո Խոսքը սպառնազինում է մեզ «ամեն բարի գործի» համար:

Արդյո՞ք դրանով ուզում են ասել, որ մենք չպետք է օգտագործենք մեր բարի ուղեղները, որ Աստված է փվել մեզ: Ո՛չ, ես պարզապես ասում եմ, եկե՛ք սկսենք Աստծո Խոսքից և տեսնենք, թե ինչ կգրնենք այնպեղ:

Ուզում են մի պահ նայենք Աստվածաշնչի պատմության ընթացքում վեց իրողությունների, որոնք կօգնեն մեզ տեսնելու այն, ինչ անհրաժեշտ է եկեղեցիներում ավելի արտացոլելու Աստծո բնավորությունը Իր Խոսքի համեմատ: Ինչպես գիտեք Աստվածաշունչը մի մեծ պատմություն է պատմում: Այս պատմությունը ներառում է իր մեջ բազմաթիվ փոքր պատմվածքներ: Այսպեղ մեր նպատակն է այս պատմությունների շարքում տեսնելու, թե ինչ է Աստված ուզում եկեղեցու համար:

## ***Նմանությունն ամեն ինչ է***

### **1) ԱՐԱՐՉԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ**

Ծննդոցում Աստված արարեց բնությունն ու կենդանիներին «յուրաքանչյուրն իր տեսակի պես»: Յուրաքանչյուր խնձոր օրինակ հանդիսացավ իրենից հետո մյուս խնձորների համար, իսկ յուրաքանչյուր գերր օրինակ հանդիսացավ իրեն հաջորդող մյուս գերրերի համար: Մարդու համար Սուրբ Գրքում կարդում ենք, «Եկեք մարդ սրեղծենք Մեր պարկերի և Մեր նմանության պես» (1:26): Մարդը մեկ ուրիշ մարդու օրինակը չհանդիսացավ, նա եղավ Աստծո օրինակի պես: Նա բացառիկ կերպով արտացոլում կամ նմանվում է Աստծուն:

Իմանալով, որ մենք յուրահատուկ կերպով սրեղծված ենք Աստծո պարկերով, մարդիկ պետք է յուրահատուկ կերպով *պատկերեն* Աստծուն և Աստծո փառքը մնացյալ արարչագործության առջև: Ինչպես մի որդի, որի գործողությունները նման են իր հոր գործողություններին և գնում է իր հոր մասնագիտական հետքերով

(Ծննդ.5:1; Ղուկ.3:38), մարդն էլ ստեղծվել է *ներկայացնելու* Աստուծո՞ւ բնավորությունը և իշխելու արարչագործության վրա, «... որ իշխեն ծովի ձկների և երկնքի թռչունների, և անասունների և բոլոր երկրի վրա» (Ծննդ.1:26):

## 2) ԱՆԿՈՒՄԸ

Բայց մարդը որոշեց չներկայացնել Աստուծո՞ւ իշխանությունը: Նա ապստամբեց Աստուծո՞ւ դեմ և շարունակեց ներկայացնել իր սեփական իշխանությունը: Ուստի Աստված Կոլոսեցի մարդուն հենց այն ինչ խնդրեց Իրենից և վարսեց նրան Իր ներկայությունից: Մարդու բարոյապես մեղանջելը նշանակում է, որ նա այլևս չի կարող ինքնուրույն մտքենալ Աստուծո՞ւ:

Արդյո՞ք մարդկությունը պահպանեց Աստուծո՞ւ պարկերը անկումից հետո: Այո՛, Ծննդոցը վերահաստատում է այդ փաստը, որ մարդը դեռևս ստեղծված է Աստուծո՞ւ «պարկերով» (5:1; 9:6): Սակայն թե՛ պարկերը և թե՛ այն ներկայացնելը աղավաղված են: Կարելի է ասել, որ հայելին ծռմոված է, ուստի կեղծ պարկեր է դիմապարկերվում, ինչպես շեղ հայելիների սենյակում: Անգամ մեր մեղքի մեջ մենք Աստուծո՞ւ պարկերից ինչ-որ մի մասնիկ ենք ներկայացնում՝ կեղծն ու ճիշտը իրար խառնված: Աստվածարանների լեզվով մարդը դարձել է թե՛ «հանցավոր» և թե՛ «այլասերված»:

## 3) ԻՍՐԱՅԵԼ

Աստված Իր ողորմությամբ ծրագիր ունի *փրկելու* և *օգտագործելու* մի խումբ մարդկանց արարչագործության համար Իր սկզբնական նպատակներն իրականացնելու համար՝ Իր փառքը ցույց տալու: Նա Աբրահամ անունով մի մարդու խոստացավ, որ կօրհնի իրեն և իր սերունդներին: Նրանք էլ իրենց հերթին օրհնություն կլինեն բոլոր ազգերի համար (Ծննդ.12:1-3): Նա կոչում է նրանց «սուրբ ազգ» և «քահանաների թագավորություն» (Ելից 19:5-7), որը նշանակում է, որ նրանք հատուկ ընտրվել են խորհելու կամ ցուցաբերելու (պարկերելու) Աստուծո՞ւ բնավորությունը և փառքը բոլոր ազգերին՝ նրանց

տված Իր օրենքին հնազանդության միջոցով (ինչպես Ադամը պեպք է աներ): Աշխարհին ցույց տալու համար, թե ինչպիսին է ԵՍ ԵՄը, Աստված ասում է Իսրայելին, «Սուրբ եղև՛ք, քանի որ Ես սուրբ եմ» (Ղևկ.11:44; 19:2; 20:7):

Նա նույնիսկ այսագգին անվանում է Իր «որդին», քանի որ որդիներից է ակնկալվում, որ հետևեն իրենց հայրերի հետքերով (Ելից 4:22-23): Իսկ Նա խոստացավ ապրելու այս որդու հետ միասին այն երկրում, որը տալու է նրանց, մի հարթակ, որտեղ այս ազգը կկարողանա ցույց տալ Աստծո փառքը (3 Թագ.8:41-43):

Չնայած դրա նաև Աստված զգուշացրեց Իր որդուն, որ եթե նա թերանա հնազանդվելու և Իր սուրբ բնավորությունը ցույց տալու մեջ, Նա կվարարի նրան այդ սուրբ երկրից: Այս երկար պատմությունը ավելի համառոտ պատմեմ. որդին չհնազանդվեց և Աստված էլ վարարեց նրան Իր ներկայությունից և երկրից:

#### 4) ՔՐԻՍՏՈՍԸ

Տին Իսրայելից հիմնական դասերից մեկն էլ այն է, որ անկում ապրած մարդկությունը ինքնուրույն չի կարող Աստծո պատկերը ներկայացնել, անգամ ունենալով Աստծո օրենքի, Աստծո տված երկրի և Աստծո ներկայությունն իրենց հետ ունենալու բոլոր այս առավելությունները: Որքան մեզնից յուրաքանչյուրը պեպք է խոնարհվի Իսրայելի պատմության շնորհիվ: Միայն Աստված կարող է իր պատկերը ներկայացնել, և միայն Աստված կարող է փրկել մեզ մեղքից և մահից:

Այսպիսով Աստված ուղարկեց Իր միածին Որդուն, որպես «մարդկանց նմանությամբ ծնված» (Փիլիպ.2:7): Այս սիրելի Որդին, որը հաճելի էր Տորը, կարարելապես հնազանդվեց Աստծո դրած կանոնին կամ թագավորությանը: Նա արեց այն, ինչ Ադամը չարեց՝ հակառակվեց Սափանայի փորձությանը. «Մարդ միայն հացով չի ապրի, այլ ամեն Խոսքով, որ դուրս է գալիս Աստծո բերանից», Նա ասաց փորձչին, երբ անապատում ծոմ էր պահում (Մատթ.4:4):

Եվ Նա արեց այն, ինչ Իսրայելը չարեց: Նա ամբողջովին ապրեց Տոր կամքի և օրենքի համաձայն, «Ես Ինքս ինձանից ոչինչ չեմ

անում, այլ ինչպես Իմ Նայրն ինձ սովորեցրեց» (Տովհ.8:28; Կեսեք նան 6:38; 12:49):

Այս Որդին, որը կարարյալապես պարկերեց իր Նորը, կարող էր Իր աշակերտ Փիլիպոսին ասել. «Նա, որ ինձ Կեսալ, Նորը Կեսալ» (Տովհ.14:9):

Պարուղը ծառից հեռու չի ընկնում: (Ինչպես Նայրն է, այնպես էլ Որդին):

Նոր Կրակարանի թղթերի հեղինակը նրան դիմում է որպես «աներևույթ Աստծո պարկեր» (Կող.1:15) և «Աստծո փառքի լույսն ու Իր էության ստույգ արտահայտությունը» (Եբր.1:3): Որպես վերջին Ադամ և նոր Իսրայել, Տիտու Քրիստոսը փրկեց մարդու մեջ Աստծո պարկերը:

Մինչդեռ Քրիստոսը ոչ միայն պարկերեց Աստծո փառավոր սրբությունը օրենքի հնազանդությամբ, այլ նաև ցույց տվեց Աստծո փառավոր ողորմությունն ու սերը խաչի վրա մեղավորների համար մեռնելով՝ վճարելով մեղքի այն պարիժը, որին նրանք էին արժանի (Տովհ.17:1-3): Այս փոխանորդական գոհր մի բան էր, որին Տին Կրակարանը անընդմեջ մատնացույց էր անում: Տիշեք այն կենդանիներին, որոնք մորթվում էին, որպեսզի ծածկեին Ադամի և Եվայի մեղքությունը իրենց մեղանչելուց հետո: Տիշեք, թե ինչպես Աստված Աբրահամի և Իսահակի համար թուփի միջից մի խոյ տվեց Իսահակին փրկելու համար: Տիշեք Տովսեփին, մի որդի, որը իր եղբայրների կողմից «գոհարեղվեց» և հեռու ուղարկվեց, որպեսզի մի օր կարողանա միջնորդ լինել մի ամբողջ ազգի համար: Տիշեք Իսրայելի ժողովրդին, որը գառան արյուն քսեց իրենց տների դռանդիքներին, որով խնայեց Իսրայելի առաջնեկներին: Տիշեք Իսրայելացի ընտանիքներին, որոնք Կրակարան էին բերում իրենց մեղքի գոհերը, իրենց ձեռքերը դնելով կենդանու գլխին, այնուհետև կարում նրանց կոկորդը՝ «կենդանու թափած արյունը պարք է լինել իմ արյունը»: Տիշեք քահանայապետին, որը Կրակին մեկ անգամ մտնում էր Սրբության Սրբոց, որպեսզի ամբողջ ժողովրդի համար քավության գոհ մատուցեր: Տիշեք Եսայի մարգարեի խոսքումը, «Բայց Նա մեր մեղքերի համար վիրավորվեցավ, և մեր անօրենությունների

համար հարվածվեցավ, մեր խաղաղության պարիժը Նրա վրա եղավ, և Նրա վերքերովը մենք բժշկվեցանք» (Եսայի 53:5):

Այս ամենը և շատ ավելին մաքնացույց էին անում Տիտու Քրիստոսին, որը գնաց խաչի մահվան որպես Աստծո գոհաբերվող գառ: Ինչպես Իր աշակերտներին ասաց վերնապանը, որ գնում է «իր արյամբ նոր ուխտ» մատուցելու բոլոր նրանց համար, որոնք կապաշխարեն ու կհավատան:

## 5) ԵԿԵՂԵՑԻՆ

Մենք, որ մեր մեղքերի մեջ մեռած էինք, կենդանացանք, երբ մկրտվեցինք Քրիստոսի մահվան և հարության մեջ: Այսպիսով Պողոսը հայտարարում է, «Դուք բոլորդ էլ Աստծո որդիներ եք՝ Քրիստոս Տիտուսի վրա եղած հավատով: Որովհետև ձեզանից ովքեր Քրիստոսով մկրտվեցին, Քրիստոսին հազան» (Գաղ.3:26-27): Եվ «քանի որ դուք որդիներ եք, Աստված Իր Որդու Տոգին ուղարկեց ձեր սրբերի մեջ, որ աղաղակում է «Աբբա՛, Տայր»: Ուրեմն այլևս ծառա չես, այլ՝ որդի» (Գաղ.4:6-7):

Ինչ պետք է անեն այսքան շատ Աստծո որդիները: Մենք պետք է ցույց տանք մեր երկնային Տոր և Որդու *քնավորությունը, պատրկերը և փառքը*:

Տիտուսն ասում է մեզ լինել «խաղաղարարներ», քանի որ Տայրն ինքը Իր Որդու գոհի միջոցով խաղաղություն է արել Իր և մեր միջև (Մատթ.5:9):

Տիտուսն ասում է մեզ «սիրել [մեր] թշնամիներին», քանի որ մեր երկնավոր Տայրը սիրեց մեզ, որ նախկինում Նրա թշնամիներն էինք (Մատթ.5:45; Հռոմ.5:8):

Տիտուսն ասում է մեզ «սիրել միմյանց», քանի որ Նա մեզ սիրելով Իր կյանքը գոհեց մեր համար և քանի որ այդ անելով մենք աշխարհին ցույց կտանք, թե ինչպիսին է Նա (Հովհ.13:34-35):

Տիտուսն աղոթեց, որ մենք «մեկ լինենք», ինչպես որ Ինքը և Տայրը մեկ են (Հովհ.17:20-23):

Տիտուսն ասում է մեզ «կապարյալ լինենք», ինչպես մեր երկնավոր Տայրն է կապարյալ (Մատթ.5:48):



Տիտուսն ասում է մեզ բոլոր ազգերում «մարդկանց որսորդներ» և աշակերպողներ լինել (Մատթ.4:19; 28:19): Նա մեզ ուղարկում է ճիշտ այնպես, ինչպես Տայրն է ուղարկել Իրեն (Տովհ.20:21):

Ինչպես Տայրը, այնպես էլ Որդին և այնպես էլ որդիները:

Քրիստոսի կատարած գործի շնորհիվ մաքրվելով իրենց մեղքից, և Սուրբ Տոգու գործի շնորհիվ նորաստեղծ և վերստին ծնունդ ստացած սրբեր ունենալով, Իր ժողովուրդը սկսել է վերականգնել Աստծո կատարյալ պատկերը: Քրիստոսն է մեր առաջինը առաջիններից (1 Կորնթ.15:23): Նա հեռացրեց քողը և ճանապարհ բացեց եկեղեցու համար ևս մեկ անգամ տեսնելու Տոր պատկերը (2Կորնթ. 3:14,16): Տիմա մենք հավաքքով ենք տեսնում Նրա պատկերը և «նույն պատկերով ենք փոխակերպվում փառքից փառք» (2 Կորնթ. 3:18):

Ուզու՛մ եք տեսնել եկեղեցու համար Աստծո ծրագիրը ամփոփված միայն երկու համարում: Պողոսը հայտարարում է.

Որպեսզի այժմ եկեղեցու միջոցով Աստծո բազմապեսակ իմաստությունը հայտնի լինի երկնային տեղերում եղող իշխանություններին և գորություններին, ըստ Նրա հավիպենական նպատակի, որ Նա կատարեց մեր Տեր Քրիստոս Տիտուսի միջոցով (Եփես. 3:10-11):

Ինչպե՛ս է եկեղեցին ցույց տալիս Աստծո բազմապեսակ իմաստությունը: Միայն ամենաիմաստուն Աստված կարող էր մշակել մի այնպիսի ճանապարհ, որի միջոցով Իրենից և միմյանցից օտարացած մեղավոր մարդկանց փրկելով, հաշտեցնի իր սերն ու արդարությունը: Եվ միայն ամենաիմաստուն Աստված կարող էր մշակել մի այնպիսի ճանապարհ, որի միջոցով քարեղեն սրբերը դարձնի մարմնեղեն, որպեսզի սիրեն և փառաբանեն Իրեն: Թ՛ո՛ղ որ ամբողջ քրիեզերքի գորությունները նայեն ու հիանան:

## 6) ՓԱՌ-ԲԸ

Մենք կկարողանանք Նրա պարկերը կարարելապես ներկայացնել այն ժամանակ, երբ տեսնենք Նրան Իր կարարյալ փառքի մեջ. «Բայց գիտենք, որ երբ Նա հայրնվի, Նրա նման պիտի լինենք, քանի որ Նրան տեսնելու ենք այնպես, ինչպես որ Նա է» (1 Նովի.3:2): Նրա պես սուրբ, Նրա պես սիրառատ, Նրա պես միաբան: Այս խոսքը չի խոստանում, որ մենք կլինենք աստվածներ: Այն խոստանում է, որ մեր հոգիները՝ ինչպես դեպի արևն ուղղված ջինջ հայելիներ, վառ կարպացուին Նրա բնավորությունն ու փառքը:

### ***Պատրանության ամփոփում***

Դուք հետևեցի՞ր պատրանությանը: Ահա և ամփոփումը: Աստված ստեղծեց աշխարհը և մարդկությանը, որպեսզի ցույց տա Իր էության փառքը: Ադամն ու Եվան, որոնք պետք է ներկայացնեին Աստծո բնավորությունը, չարեցին: Եվ ո՛չ էլ Իսրայելի ժողովուրդը: Ուստի Աստված ուղարկեց Իր Որդուն ներկայացնելու Իր սուրբ և սիրառատ բնավորությունը և հեռացնելու աշխարհի մեղքերի դեմ ունեցած Աստծո բարկությունը: Քրիստոսով Աստված եկավ հայրնելու Իրեն: Եվ Քրիստոսով Աստված եկավ փրկելու:

Այսպիսով եկեղեցին, որին շնորհվել է Քրիստոսի կյանքն ու Սուրբ Նոգու գորությունը, կանչված է ներկայացնելու Աստծո բնավորությունն ու փառքը ամբողջ փիեզերքին, Նրա անսահման իմաստության և փրկության գործի վկայությունը լինելու խոսքով և գործերով:

Բարեկամս, ի՞նչ ես փնտրում եկեղեցում: Լավ երաժշտություն: Նարմար մթնոլորտ: Պաշտամունքի ավանդական կա՛րգ: Իսկ ի՞նչ կասես.

*մի խումբ ներված ապարամբների մասին...*

*որոնց Աստված ուզում է օգտագործել Իր փառքը ցույց տալու... ամբողջ երկնային գործի առջև...*

*քանի որ նրանք պատրանում են Նրա մասին ճշմարտությունը... և ավելի շատ նման են Նրան՝ սուրբ, սիրող և միաբան:*

**ԼԱՎԱԳՈՒՅՆՍ ԻՆՉՊԵՍ ԱՌԱՋՆՈՐԴՎԵԼ.  
ԻՆՉՊԵՍ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ ԱՍՏԾՈ  
ԲՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ**

**Ես խոստովանում եմ,** որ այնքան էլ լավ չեմ փնային գործերում՝ գրապահարաններ պատրաստելու, սպերեո համակարգի հաղորդալարերը անցկացնելու մեջ, ոչ էլ հասկանում եմ, թե ինչի համար են իմ հեռախոսի վրայի բոլոր կոճակները: Նույնիսկ ինձ չեն օգնում ուղեցույց ձեռնարկները: Նաճախ հույսս դնում եմ իմ ընտանիքի անդամների կամ ընկերների օգնության ու հնարագիտության վրա:

Ես երախտապարտ եմ, որ որոշ բնագավառներում գործնական հարցերում ունեցած իմ կարողությունների պակասը չի խոչընդոտում հեղինակելու, թե ինչպես լավագույնս առաջնորդվեմ. ինչպես որ Աստվածաշունչն է ասում, թե ինչպես կարող է եկեղեցին ներկայացնել Աստծո փառավոր բնավորությունը: Այսպեղ հիմնական սկզբունքը բավականին պարզ է՝ մենք պետք է լսենք Աստծո Խոսքին և հետևենք դրան: Միայն երկու քայլ՝ լսել և հետևել:

Աստծո Խոսքին լսելով և հետևելով մենք պատկերում և ներկայացնում ենք Աստծո բնավորությունն ու փառքը, ճիշտ ինչպես թագավորի դեսպաններ:

Կամ ինչպես մի որդի: Պատկերացրեք մի որդի, որի հայրը ճամփորդել է հեռու երկիր և ապա գրել մի շարք նամակներ, խրատելով նրան, թե ինչպես պետք է պահի իր ընտանիքի անունը և թե ինչպես պետք է դեկավարի ընտանեկան գործերը: Բայց և պատկերացրեք, որ որդին երբեք չկարդա իր հոր նամակները: Ինչպե՞ս կարող է ընդհանրապես այս որդին ներկայացնել իր հորը կամ դե-

կավարել նրա գործերը: Չի՛ կարող: Եվ ո՛չ էլ Աստուծո Խոսքը անպետող փրկական եկեղեցին կկարողանա:

### ***Երկու փեսակ մարդիկ***

Աստուծո Խոսքին անհնազանդ գրնվելու պատճառով Եղեմի պարտեզից Ադամի վարավելուց ի վեր ամբողջ մարդկությունը բաժանված է երկու ճամբարների՝ մարդիկ, որոնք հնազանդվում են Աստուծո Խոսքին և մարդիկ, որոնք չեն հնազանդվում: Աբրահամը հնազանդվեց, Փարավոնը՝ ոչ: Դավիթը հնազանդվեց, իր որդիներից շարերը՝ ոչ: Զաքեոսը հնազանդվեց, Պիղատոսը՝ ոչ: Պողոսը հնազանդվեց, բարձրագույն առաքյալները՝ ոչ:

Եվ կարող ենք շարունակել եկեղեցու պատմության էջերում: Աթանասիոսը հնազանդվեց, Արիոսը՝ ոչ: Լյութերը հնազանդվեց, Տոմը՝ ոչ: Մաքենը հնազանդվեց, Ֆոսդիբը՝ ոչ:

Իհարկե ես չեմ պնդում, որ ունեմ աստվածային և անսխալ մտքեցում այս վերջին խմբի հանդեպ: Սակայն աստվածաշնչյան ամբողջ պատմությունը միանշանակ մեզ սովորեցնում է, թե ինչն է բաժանում Աստուծո ժողովրդին ինքնակոչներից և անհավարներից. Աստուծո ժողովուրդը լսում է Աստուծո Խոսքին և ուշադրություն դարձնում, մյուսները՝ ոչ:

Ահա այսպիսի մեծ ցավ է վերապրում Մովսեսը Երկրորդ Օրինաց գրքում, երբ հաղորդակցվում է երկրորդ անգամ Իսրայելի ժողովրդի հեպ Խոսքացյալ Երկրի սահմանի վրա կանգնած: Նա սկսում է նրանց հիշեցնելով, որ քառասուն տարի առաջ նա կանգնել էր հենց այդ նույն փրկում նրանց ծնողների հեպ և նրանք չէին լսել նրան: Ուստի Աստված անիծել էր նրանց ծնողներին, որ մեռնեն անապատում: Այն երեք ճառախոսությունները, որոնք հեպնում են հաջորդող մտաբանողական երեսուն գլուխներում, կարող են ամփոփվել բավականին պարզ. «Լսե՛ք, ուշադրություն դարձրե՛ք: Գրե՛ք: Նիշե՛ք, թե ինչ է ասել Աստված: Նա է այն միակը, որ փրկեց ձեզ Եգիպտոսի գերությունից, ուրեմն լսե՛ք Նրան»: Երեսուներորդ գլխում Մովսեսը իր ասած բոլոր խոսքերի ծանրությունը կշռում է այս մի պատվիրանի մեջ. «Ուրեմն կյանքը ընտրի՛ր, որ սպրեա» (հ. 19):

Աստուծո ժողովուրդը կյանք կգտնի միայն և բացառապես Աստուծո Խոսքը լսելու և հնազանդվելու շնորհիվ: Այդքան պարզ է:

Նոր Կտակարանի եկեղեցու համար Աստուծո պարզամը չի տարբերվում: Նա փրկեց մեզ մեղքի և մահվան գերությունից, երբ լսեցինք Նրա Խոսքին և հավապացինք (ՏՌՈՄ.10:17): Տիմա էլ պետք է լսենք Նրա Խոսքին ու հետևենք: Նրա ասածներին ականջ դնելով և հետևելով, մենք ավելի շատ ենք ներկայացնում Իր բնավորությունն ու փառքը:

Ինչ-որ մեկը կարող է առարկել, «Դա եկեղեցուն փանում է ներքին կենտրոնացման: Բայց չէ՞ որ եկեղեցին կանգնված է արտաքին կենտրոնացման՝ միսիոներության, ավերարանչության»: Անշուշտ եկեղեցին կանգնված է այդ բաների համար: Դա Աստուծո բնավորությունը ներկայացնելու մի մասն է կազմում: «Ներկեցե՛ք Ինձ», ասաց Տիմուսը, «և Ես ձեզ մարդկանց ձկնորսներ պիտի դարձնեմ» (Մատթ.4:19) կամ ինչպես մեկ այլ փեղ Տիմուսն ասում է. «Ինչպես Իմ Տայրն Ինձ ուղարկեց, այդպես էլ Ես ձեզ եմ ուղարկում» (ՏՈՎԻ. 20:21): Երբ մենք միսիոներություն, ավերարանչություն և արքայության գործն ենք անում, դա անում ենք համաձայն Աստուծո Խոսքի, այս դեպքում համաձայն Մատթեոս 4:19, ՏՈՎԻանես 20:21-ի և շատ ուրիշ աստվածաշնչյան խոսքերի: Մենք այդպես չենք անում, քանի որ ինչ-որ մի աստվածաբան այդպես է սովորեցրել և մենք բոլորս համաձայն ենք, որ դրանք լավ գաղափար են: Մենք քարոզում, ավերարանում և արքայության գործն ենք անում, *քանի որ Աստված Իր Խոսքի մեջ ասել է մեզ այս բաները անել:*

Ի վերջո, պարսությունը չի բաժանում մարդկանց ավերարանողների և չավերարանողների միջև: Իրականում հենց դա չէ այն *հիմքը*, որը բնորոշում է եկեղեցուն: Այն բաժանված է Աստուծո լսողների և չլսողների միջև:

Ահա թե ինչու **Մատթեոսը** արձանագրում է այն, ինչ Տիմուսն ասաց Սալանային մարդու «Աստուծո բերանից դուրս եկած ամեն Խոսքով» (Մատթ.4:4) սպրելու մասին, ինչպես նաև Տիմուսի վերջին խոսքերը Իր աշակերտներին, որ աշակերտներ պատրաստեն բոլոր ազգերից, մկրտելով նրանց և «սովորեցնելով նրանց, որ պահեն այն ամենը, ինչ Ես ձեզ պատվիրեցի» (Մատթ.28:20):

Ահա թե ինչու **Մարկոսը** արձանագրում է Տիմուսի պատմած սերմնացանի առակին, որտեղ սերմը ցանվում է չորս փարթեր հողի մեջ, որպես Աստծո Խոսքի մասին մի առակ (Մարկոս 4): Ունանք կրնդունեն այն, ունանք՝ ոչ:

Ահա թե ինչու է **Ղուկասը** նկարագրում իրեն որպես Խոսքի ականապես ու ծառա (Ղուկ.1:2), և ինչու է արձանագրում Տիմուսի այս խոսքմանը. «Երանի՛ նրանց, ովքեր լսում են Աստծո Խոսքը և պահում» (Ղուկ.11:28):

Ահա թե ինչու է **Տովհաննեսը** արձանագրում Պետրոսին ուղղված Տիմուսի վերջին խոսքերը, երբ Նա երեք անգամ կրկնեց «արածեցրու Իմ ոչխարներին» (Տովհ. 21:15-17): Ինչո՞վ արածեցնի (կերակրի) նրանց. Աստծո Խոսքով:

Ահա թե ինչու, երբ վաղ շրջանի եկեղեցին **Գործք Առաքելոցում** հավաքվում էր, նրանք «հասարակորեն շարունակում էին առաքյալների ուսմունքի, հաղորդակցության և հաց կտրելու ու աղոթքի մեջ» (Գործք 2:42):

Ահա թե ինչու է Պողոսն ասում **Տոմնացիներին**, «Նավապրը լսելուց է, և լսելը՝ Աստծո Խոսքից» (Տոմ.10:17):

Ահա թե ինչու է նա ասում **Կորնթացիներին**, որ «խաչի քարոզչությունը» «Աստծո գործությունն է» փրկության համար (1Կորն.1:18), քանի որ «Աստված էլ հաճեց քարոզության հիմարությանը փրկել նրանց, ովքեր կհավապան» (1Կորնթ.1:21): Եվ ահա թե ինչու հետագայում նա ասում է նույն եկեղեցուն, որ ինքը չի «խարդախում Աստծո Խոսքը» կամ «կեղծում Աստծո Խոսքը», այլ «հայքնում է ճշմարտությունը» նրանց հավիտենական օգտի համար (2 Կորնթ. 2:17; 4:2):

Ահա, թե ինչու է նա ասում **Գաղափացիներին**, որ եթե «մեկը ձեր ընդունածից [ինչ որ նա էր քարոզել նրանց] ուրիշ ավերարան քարոզի ձեզ, նգովյա՛լ լինի» (Գաղ.1:9):

Ահա, թե ինչու է նա ասում **Եփեսացիներին**, որ դուք հուսացիք Քրիստոսին «երբ լսեցիք ճշմարտության Խոսքը՝ ձեր փրկության ավերարանը» (Եփես.1:13): Նա նաև ասում է նրանց, որ Աստված «մի քանիսին րվեց, որ առաքյալներ լինեն, մի քանիսին՝ մարգարեներ, մի քանիսին՝ ավերարանիչներ, մի քանիսին՝ հովիվներ և

ուսուցիչներ՝ սրբերի կապարելության համար, ծառայության գործի համար, Քրիստոսի մարմնի շինության համար. մինչև բոլորս էլ հասնենք հավարի միասնության և Աստուծո Ռոդո ճանաչմանը, կապարյալ մարդ լինելու, Քրիստոսի կապարյալ հասակի չափն ունենալու» (Եփես.4:11-13):

Ահա, թե ինչու է նա ասում **Փիլիպեցիներին**, որ «Տիրոջով եղբայրներից շարերը իմ կապանքներից քաջալերված, ավելի համարձակորեն սկսեցին Աստուծո Խոսքը քարոզել՝ առանց երկյուղի» (Փիլ. 1:14):

Ահա, թե ինչու է նա ասում **Կողոսացիներին**, «Թող Քրիստոսի Խոսքը ձեր մեջ բնակվի առաքապես, կապարյալ իմաստությամբ՝ միմյանց սովորեցնելով ու հորդորելով...» (Կող.3:16):

Ահա, թե ինչու է նա ասում **Թեսաղոնիկեցիներին**, «Դրա համար անդադար գոհանում ենք Աստուծուց, որովհետև, երբ մեզանից լսելով դուք ընդունեցիք Աստուծո Խոսքը, ո՛չ թե որպես մարդու խոսք, այլ որպես Աստուծո Խոսք, որովհետև ճշմարտապես այն Աստուծո Խոսքն է, և ներգործում է ձեր՝ հավաքացյալներիդ մեջ» (1 Թեսաղ. 2:13), և թե ինչու է հերքազայում նա խրատում նրանց, «Եղբայրներ, հաստատվե՛ք մնացե՛ք, և պահեցե՛ք այն ավանդությունները, որ սովորեցիք թե՛ խոսքով և թե՛ մեր թղթով» (2 Թեսաղ.2:15):

Ահա, թե ինչու է նա ասում իր աշակերտ **Տիմոթեոսին**, որ եկեղեցու համար իր ընտրած երեցները պետք է լինեն «սովորեցնելու ունակ», մինչ սարկավագները, որոնք ծառայում են իր եկեղեցում պետք է «հավարի խորհուրդը պահեն մաքուր խղճմամբով» (1Տիմ.3:2,9): Իր հաջորդ նամակում նա Տիմոթեոսին ասում է, որ նրա գործի էությունը կենտրոնացած է միայն մեկ բանի վրա.

Քարոզի՛ր Խոսքը, այն հայտարարի՛ր պարտե՛ կամ անպարտե՛ առիթներով, հանդիմանի՛ր, սաստի՛ր, հորդորի՛ր՝ ամենայն համբերությամբ և ուսուցանելով: Որովհետև կգա ժամանակ, երբ ողջամիտ վարդապետությանը չպիտի անսան, այլ իրենց ցանկությունների համաձայն վարդապետներ պիտի հավաքեն իրենց շուրջը՝ իրենց ուզածը լսելու մարմնաջով, և ճշմարտությունից պիտի ականջ դարձնեն և առասպելների երևից գնան (2 Տիմ.4:2-4):

Ահա, թե ինչու էր նա ցնծում **Տիպոսի** հետ, որ Աստված «Իր Խոսքը հայարնեց քարոզությամբ, որն ինձ վստահվեց մեր Փրկիչ Աստծո հրամանով» (Տիպոս 1:3):

Ահա, թե ինչու էր Պողոսը հորդորում **Փիլիմոնին** լինելու ակտիվ իր «հավապքը» վկայելու մեջ, որպեսզի «հավապքը» ոչ թե զգացմունքային սուրբեկտիվ վիճակ է, այլ հավապալիքների սահմանված մի ամբողջություն (Փիլիմոն 6):

Ահա, թե ինչու **Երրայեցիների** նամակի հեղինակը զգուշացնում է, «Որովհետև Աստծո Խոսքը կենդանի է ու զորավոր, և ամեն երկսայրի սրից ավելի կտրուկ, որ թափանցում է մինչև անձի ու հոգու, հողերի ու ողնածուծի բաժանման սահմանը, և մարմերի ու սրտի խորհուրդների գննողն է» (Երբ.4:12):

Ահա, թե ինչու է **Նակոբոսը** հիշեցնում իր ընթերցողներին, որ Աստված «Իր կամքով մեզ ծնեց ճշմարտության Խոսքով» և «եղևք Խոսքը կատարողներ, և ոչ թե միայն լսողներ՝ ինքներդ ձեզ խաբելով» (Նակ.1:18; 22):

Ահա, թե ինչու է **Պետրոսը** հիշեցնում սուրբերին, որոնք սփռված էին մի շարք շրջաններում, որ նրանք «վերստին ծնված լինելով ոչ թե ապականացու սերմից, այլ անապականացուից՝ Աստծո Խոսքով, որն ապրում է և մնում հավիտյան» (1 Պետ.1:23), և որ «Տիրոջ Խոսքը մնում է հավիտյան» (1:25): Նաև այս պատճառով է, որ նա իր երկրորդ նամակում ասում է, «Գրքում ո՛չ մի մարգարեություն իր հատուկ մեկնությունը չունի: Քանի որ հին ժամանակներում մարգարեությունը մարդու կամքով չարվեց այլ Աստծո սուրբ մարդիկ խոսեցին՝ Սուրբ Նոգու կողմից դրդված» (2 Պետ.1:20-21):

Ահա, թե ինչու **Նովհաննեսը** գրում է, «Բայց ով պահում է Նրա Խոսքը, իսկապես նրա մեջ կատարյալ է Աստծո սերը, ու սրանով ենք իմանում, թե Նրա մեջ ենք: Նա, ով ասում է, թե Նրա մեջ է բնակվում, ինքն էլ պետք է քայլի այնպես, ինչպես Նա էր քայլում» (1 Նովհ.2:5-6), և թե ինչու է նա ասում, «Եվ այն է սերը, որ քայլենք ըստ Նրա պատվիրանների» (2 Նովհ.6), և թե ինչու է հայտարարում, որ նա «չունի ավելի մեծ ուրախություն, քան լսելը, որ իր որդիները ճշմարտության մեջ են քայլում» (3 Նովհ.4):



Ահա, թե ինչու է **Նուդան** գրեթե իր ամբողջ նամակի բովանդակությամբ զգուշացնում իր ընթերցողներին կեղծ վարդապետների դեմ (Նուդա 4-16), և խոստանում, որը Տերը գալու է «բոլորի դաբաստանը փռելու և հանդիմանելու նրանց մեջ եղող բոլոր ամբարիշտներին իրենց կապարած ամբարիշտ գործերի համար և այն բոլոր խիստ խոսքերի համար, որ անաստված մեղավորները խոսեցին Իր դեմ» (Նուդա 15):

Եվ ահա, թե ինչու է Նովհաննեսը **Նայրնության** գրքի մեջ գովում Ֆիլադելֆիայի եկեղեցուն, ասելով, «Գիտեմ քո գործերը... քանի որ դու քիչ ուժ ունես և պահեցիր Իմ Խոսքը ու անունս չուրացար» (Նայրն.3:8):

\* \* \*

Սիրելի՛ բարեկամ, եկեղեցին իր փեղը գտնում է, երբ լսում է Աստուծո Խոսքին: Նա գտնում է իր նպատակը, երբ Աստուծո Խոսքի համեմատ ապրում է և ներկայացնում Աստուծո Խոսքը: Եկեղեցու գործն է լսել և ապա արձագանքել: Այդքանը: Այսօր եկեղեցիների առջև ծառայած է կողմնորոշման հարցեր, թե ինչպես «հարմարվեն» կամ «ռազմավարություն գործադրեն» կամ «լինեն զգայուն» կամ նույնիսկ «խորհրդակցեն»: Սակայն պետք է կողմնորոշվել, թե ինչպես հավատարիմ մնալ լսել, վստահել և հնազանդվել:

Այդ իմաստով, մենք շատ նման ենք Իսրայելի ժողովրդին, որը պատրաստվում էր մտնել Խոստացյալ Երկիրը: Աստված մեզ ասում է, «Լսի՛ր, եկեղեցի՛, հեփսի՛ր»: Բարի լուրն այն է, որ մենք ի տարբերություն բուն Իսրայել ազգի, ունենք Աստուծո լրիվ հայրնությունը Նիսուս Զրիստոսի մեջ: Եվ ունենք Նրա Որդու Նոզին՝ մեր փրկության կնիքն ու խոստումը:

### ***Եկե՛ք շարունակենք լսել***

Այս ամենից հետո, ահա թե ինչու ենք ցանկանում շարունակել լսել մինչ հասնում ենք այս գրքի երկրորդ կեսին: Ուրիշ է՛լ ինչ ունի Աստված Իր Խոսքի մեջ մեզ սովորեցնելու առողջ եկեղեցու վերա-

բերյալ: Առողջ եկեղեցու իննը նշանները, որոնք հիմա սկսելու ենք քննարկել, հույսով են պարզապես միայն իմ գաղափարները չեն: Դրանցով պարզապես ես փորձում եմ *մեզանից բոլորին* դրդելու շարունակել լսել: Նայե՛ք բովանդակության ցանկին, և կհասկանաք, թե ինչ նկատի ունեմ. բացառական (կամ *աստվածաշնչյան*) քարոզ, *աստվածաշնչյան* աստվածաբանություն, բարի լուրի *աստվածաշնչյան* հասկացություն, դարձի գալու *աստվածաշնչյան* հասկացություն, եկեղեցու անդամության *աստվածաշնչյան* հասկացություն, *աստվածաշնչյան* եկեղեցու կարգապահություն և այլն:

Եթե նույնիսկ դուք չհամաձայնվեք հաջորդ գլուխներում իմ որևէ ասածի հետ, հույսով եմ, որ դուք չեք համաձայնվի, քանի որ կարծում եք, որ իմ կարծիքը չի համապատասխանում Աստվածաշնչի մեկնաբանության հետ: Այլ կերպ ասած, հույս ունեմ, որ դուք նույնպես թույլ կտաք, որ ձեր լսածները առաջնորդվեն Նրա Խոսքով, հասկանալու, թե ինչպիսին պետք է լինի և ինչ պետք է անի եկեղեցին:

**ՆԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ.**  
**ԵԹ-Ե ՄՏԱԾՈՒՄ ԵՔ ԵԿԵՂԵՑԻՆ ԹՈՂՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ...**

***Նախքան կորոշեր հեռանալ***

1. Աղոթեր:
2. Նախքան կրեղափոխվեր մեկ այլ եկեղեցի կամ մեկ այլ քաղաք րեղեկացրեք ձեր ներկայիս հովվին ձեր մտադրության մասին: Դիմեք նրա խորհրդին:
3. Կշռադարեր ձեր դրդապարճառները: Արդյո՞ք ցանկանում եք հեռանալ մեղսալի, անձնական ընդհարման կամ հիասթափության պարճառով: Եթե վարդապետական հարցերի պարճառով է, ապա արդյո՞ք այդ հարցերը նշանակալի են:
4. Ձեր հնարավորության սահմաններում արեք ամեն բան, որ հաշտությանը հարթեք բոլոր խեղաթյուրված փոխհարաբերությունները:
5. Մի՛ մոռացեք հաշվի առնել բոլոր այն «շնորհքի վկայությունները», որ րեսել եք եկեղեցու կյանքում, որտեղ Աստծո գործն ակնհայտ է: Եթե չեք կարողանում րեսնել Աստծո շնորհքի որևէ վկայություն, հնարավոր է ևս մեկ անգամ կամննաք քննել ձեր իսկ սիրտը (Մատթ.7:3-5):
6. Խոնարհ եղե՛ք: Գիտակցե՛ք, որ դուք չունեք բոլոր փաստերը և գնահատե՛ք մարդկանց ու իրավիճակները բարեսրտորեն (կասկածելու իրավունք րվեք նրանց):

***Եթե գնում եք***

1. Մի՛ բաժանեք մարմինը:
  2. Ննարավորինս զգույշ եղե՛ք դժգոհություն չսերմելու նույնիսկ ձեր ամենամտերիմ ընկերների շրջապատում: Տիշե՛ք, որ դուք չեք կամենում խոչընդոտել այդ եկեղեցում շնորհքի մեջ նրանց աճը: Նրաժարվե՛ք ամեն րեսակ բամբասելու ցանկությունից (երբեմն այն վերաբերում է «բացթողումներին» կամ «ձեր զգացմունքները արտահայտելուն»):
  3. Աղոթե՛ք և օրհնե՛ք եկեղեցին և եկեղեցու առաջնորդներին: Փնտրե՛ք ճանապահներ դա գործնականորեն արտահայտելու համար:
  4. Եթե վիրավորվածություն եք ունեցել, ապա ներե՛ք, այնպես ինչպես դուք եք ներվել:
-

ՄԱՍ 2.

**ԱՌՈՂՋ ԵԿԵՂԵՑՈՒ  
ՆԻՄՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐԸ**

# ԱՌՈՂՋ ԵԿԵՂԵՑՈՒ ՏԻՄՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐԸ

**Մենք որոշեցինք, որ ուզում ենք** առողջ եկեղեցիներ: Մենք ուզում ենք այնպիսի համայնքներ, որոնք ավելի ու ավելի շատ են արտացոլում Աստուծո բնավորությունը այնպես, ինչպես Իր Խոսքի մեջ է մեզ հայտնված: Եկեղեցիները լինեն մե՞ծ թե փոքր, քաղաքում թե գյուղում, ավանդական՝ թե ժամանակակից. հավաքվեն Կրկնօրյա, շենքերում, դպրոցներում, թե խանութների առջև, միայն թե ներկայացնեն աշխարհին, թե ինչպիսին է մեր սուրբ և սիրող Աստվածը: Թող որ նրանք Աստուծո հրաշալի փառքի վկայությունը լինեն խոսքով և գործով:

Ուրեմն հարց է ծագում մտածելու, թե *ի՞նչ է բնորոշ առողջ եկեղեցուն:*

Եթե խոսենք առողջ ֆիզիկական մարմին ունենալու մասին, ուրեմն պետք է խոսենք բալանսավորված դիետիկ սնվելու, մարզվելու, բավականաչափ քնելու և այլնի մասին: Իսկ եկեղեցո՞ւ մարմինը:

Այս և հաջորդ բաժիններում ես կներկայացնեմ առողջ եկեղեցու իննը նշանները: Ննարավոր է ոմանք ասեն, որ այս նշանները այն ամենը չեն, որ կարելի է ասել առողջ եկեղեցու մասին: Եվ նույնիսկ պարտադիր չէ, որ դրանք ամենակարևորն են եկեղեցու համար: Օրինակ, որպես եկեղեցու պատմության ուսանողներ ձեզ կասեն, որ մկրտությունն ու հաղորդությունը աստվածաշնչյան եկեղեցու հիմնական ասպեկտներն են: Չնայած դրան, դրանք ուղղակիորեն չեն քննարկվում այստեղ: Քանի որ իրականում յուրաքանչյուր եկեղեցի առնվազն պետք է, որ մտադիր լինի դրանք գործադրելու: Այստեղ քննարկվող իննը հարկանիշները նշաններ են, որոնց միջոցով կարելի է փարբերակել ողջամիտ, առողջ, աստվածաշնչյան եկեղեցին իր շատ այլ հիվանդ քույրերից: Այս իննը նշանները

այսօր շար հազվադեպ են հանդիպում և հերևաբար հապուկ կարիք կա, որ դրանց ուշադրություն դարձնենք և գործադրենք մեր եկեղեցիներում:

Այս բաժնում նկարագրելու են այն, ինչ անվանում են առողջ եկեղեցու երեք *հիմնական* նշաններ: Տիմնական նշանները համարվում են ամեն առումներով հիմնական: Եթե հեռացնեք բացառական քարոզը, աստվածաշնչյան աստվածաբանությունը և աստվածաշնչյան հասկացությունը եկեղեցու կյանքից, ապա կրեսներ, որ եկեղեցու առողջությունը շար արագ և սկզբունքորեն կվաթարանա: Իրականում կարելի է սպասել, որ այն շուրտով իր շունչը կփչի (եթե անգամ նրա դռները փոխանկապես են բաց):

Ցավոք եկեղեցու պատմությունը լի է անհամար օրինակներով, երբ հովիվները, որոնք գուցե և լավ շարժառիթներով, փորձել են իրենց եկեղեցիները դարձնել ավելի «ընկալելի» կամ «ժամանակին համահունչ» փոխգիջելով այս երեք նշաններից որևէ մեկը: Ինչ-որ առումով նրանք փորձել են լինել Աստուծոց ավելի իմաստուն: Բարեկամս, մի՛ հերևիր նրանց օրինակին:

Եթե ինչ-որ մեկը ինձ զանգահարի և հարցնի, թե արդյոք պեքք է ընդունի մի այնպիսի եկեղեցում հովվություն անելու առաջարկը, որտեղ նրանք չեն ցանկանում լսել բացառական քարոզ, ապա ամենայն հավանականության չեմ քաջալերի այդ մարդուն, որ ընդունի այդ պաշտոնը: Եթե ինչ-որ Քրիստոնյա զանգահարի ինձ ասելով, որ իրենց եկեղեցու ամբիոնից մշտապես սուր ավերարան է քարոզվում, ապա հավանաբար ես կհորդորեմ նրան մտածելու եկեղեցին փոխելու մասին:

Ինչո՞ւ են այսքան խիստ արտահայտվում այս մասին: Քանի որ այդ նույն պարճառով, ես չեի քաջալերի մարդկանց գնալ մի այնպիսի ռեստորանում ճաշելու, որտեղ իրականում սնունդ մատուցելու փոխարեն մատուցում են միայն սննդի նկարները: Աստուծո Խոսքը և միմիայն Աստուծո Խոսքն է կյանք փալիս:



Գրային համարներ որոշակի թեմայի շուրջ, ինչպես օրինակ աղոթքի թեման կամ գոհարերության թեման: Կենսագրական քարոզչությունը ընարում է Աստվածաշնչից ինչ-որ մեկի կյանքը և պատկերում այդ անհատի կյանքը որպես Աստծո շնորհքի դրսևորում և որպես հույսի և հավատարմության օրինակ: Քարոզչության այս մյուս փեսակները ևս կարող են որոշակի իրավիճակներում օգտակար լինել: Մակայն եկեղեցու կանոնավոր սնունդը պետք է բաղկացած լինի Աստծո Խոսքի որոշակի հատվածների բացատրությամբ և կիրառությամբ:

Բացառական քարոզի կիրառությունը պահանջում է հավասարառ այն, որ ինչ որ Աստված ասում է՝ հեղինակավոր է Իր ժողովրդի համար: Այն ենթադրում է, որ Իր ժողովուրդը *պետք է և կարիք ունի* լսելու Խոսքը, այլապես մեր եկեղեցիները կգրկվեն այն միջոցից, որն Աստված կիրառում է մեզ Իր պատկերի պես ձևավորելու նպատակով: Այն ենթադրում է, որ Աստված նախապես է Իր եկեղեցու համար, որ սովորի երկու Կրակարաններից էլ, ինչպես նաև Սուրբ Գրքի յուրաքանչյուր ժանրից՝ օրենքից, պատմությունից, իմաստությունից, մարգարեությունից, Ավետարաններից և նամակներից: Բացառական քարոզ ավող քարոզիչը, որը ուղիղ շարժվում է Աստվածաշնչի գրքերի միջով, և որը մշտապես պարզվում է երկու Կրակարանների և Սուրբ Գրքի ժանրերի մեջ, նման է մի մոր, որը իր երեխաներին մատուցում է սննդի բոլոր փեսակի խմբերից, այլ ոչ թե միայն այն երկու կամ երեք կերակուրները, որոնք սիրում են իր երեխաները:

Բացառական քարոզչի հեղինակությունը սկսում և ավարտվում է Աստծո Խոսքով: Ինչպես Հին Կրակարանի մարգարեներին և Նոր Կրակարանի առաքյալներին տրված էր ոչ թե պարզապես գնալ ու խոսել, այլ փոխանցել հատուկ տրված պատգամ, այնպես էլ այսօր Քրիստոնյա քարոզիչները ունեն իշխանություն խոսելու Աստծուց այնքան ժամանակ, որքան կխոսեն Նրա Խոսքից:



## Ինչ չէ այն

Ինչ-որ մեկը կարող է ուրախությամբ հայտարարել, որ Աստուծո խոսքը հեղինակություն ունի և Աստվածաշունչը անսխալական է: Մինչդեռ, եթե այդ մարդը գործնականում (դիտարկորյալ կամ ոչ) չի քարոզում բացատրելով, ապա հակասում է իր իսկ հայտարարությանը:

Երբեմն մարդիկ շփոթում են բացատրական քարոզը իրենց հայրնի մի ինչ-որ բացատրական քարոզչի ոճի հետ: Սակայն բացատրական քարոզը իրականում ոչ մի կապ չունի ոճի հետ: Ինչպես ուրիշներն են նկատել, բացատրական քարոզը այն չէ, թե *ինչպես է քարոզիչն ասում* իր ասելիքը, այլ *ինչպես է քարոզիչը որոշում* ասել իր ասելիքը: Արդյո՞ք Սուրբ Գիրքն է որոշում մեր քարոզի բովանդակությունը, թե մեկ այլ բան: Բացատրական քարոզը չի ընդգծվում ինչ-որ հատուկ ձևաչափով կամ ոճով: Ոճերը կարող են փարբեր լինել: Իրականում այն ընդգծվում է Սուրբ Գրային բովանդակությամբ:

Երբեմն մարդիկ շփոթում են բացատրական քարոզը Սուրբ Գրքից ինչ-որ համար կարդալու և ապա այդ խոսքի հետ թեթևակի կապ ունեցող ինչ-որ մի թեմայի շուրջ քարոզելու հետ: Մինչդեռ, երբ քարոզիչը հորդորում է իր եկեղեցուն իր ընտրած թեմայով, կիրառելով աստվածաշնչյան հատվածներ միայն որպեսզի վերադառնա և իր նպատակը մարնանջի այդ խոսքից, ապա նա երբեք էլ չի քարոզի ավելին, քան արդեն գիտի: Եվ եկեղեցին միայն կսովորի այն, ինչ քարոզիչն արդեն գիտի: Բացատրական քարոզը դրանից ավելին է պահանջում: Այն պահանջում է աստվածաշնչյան հատվածի կոնտեքստի հանդեպ մանրակրկիտ ուշադրություն, քանի որ նպատակն է աստվածաշնչյան փոքրիկ նշանակությունը դարձնել քարոզի նպատակը: Երբ քարոզիչը հորդորում է իր համայնքին քարոզելով Սուրբ Գրքի հատվածը իր կոնտեքստի մեջ՝ որպեսզի հատվածի նպատակը հանդիսանում է քարոզի նպատակը, թե՛ քարոզիչը և թե՛ համայնքը արդյունքում կլսեն այնպիսի բաներ Աստուծուց, որը քարոզիչը մտադիր չէր ասել, երբ առաջին անգամ նստել էր ուսումնասիրելու և պատրաստվելու այդ քարոզին («Նաջորդ շաբաթ մենք կնա-

յենք Ղուկաս 1-ը, և կրեսանենք, թե ինչ ունի Աստված մեզ համար Ղուկաս1-ում: Դրան հաջորդող շարաթվա մեջ կնայենք Ղուկաս 2-ը և կրեսանենք, թե ինչ ունի Աստված մեզ համար Ղուկաս 2-ում: Դրանից հետո...»):

Մրա նշանակությունը կհասկանանք, երբ մտածենք մեր Քրիստոնեական կյանքի յուրաքանչյուր քայլի մասին՝ ապաշխարության հենց առաջին կանչից մինչև վերջերս մեր կյանքում Մուրբ Տոգու կողմից մեզ համոզելու գործի ամբողջ ընթացքը: Արդյո՞ք շնորհքի մեջ հոգևոր աճման այդ քայլերից յուրաքանչյուրն էլ տեղի չեն ունեցել այն ժամանակ, երբ լսել ենք Աստծուց այնպիսի ճանապարհներով, որ նախկինում Նրան այդպես չենք լսել:

Քարոզչի ծառայությունը պետք է բնութագրվի Աստծո Խոսքին հնազանդվելու այսպիսի գործնական օրինակով: Չնայած դրան, պետք չէ սխալվել. վերջին հաշվով եկեղեցու համայնքի պարասխանապվությունն է համոզվելու, որ իր քարոզիչները հենց այդպիսին են: Տիտուսը Մարթեոս 18-ում նշում է, որ համայնքներն են պարասխանապարտ եկեղեցում տեղի ունեցող իրադարձությունների համար, ինչպես և Պողոսն է նշում Գաղ.1-ում: Ներկայումս եկեղեցին մի մարդու, որը չի ցուցաբերում գործնական նվիրում Աստծո Խոսքը լսելու և սովորեցնելու հարցում, երբեք չպետք է հոգևոր ծառայության պարասխանապվություն ընձեռի եկեղեցու մարմնի վրա: Իսկ երբ ընձեռում է, ապա դրանով խանգարում է եկեղեցու աճմանը, երաշխավորելով, որ եկեղեցին չի կարող հասունանալ հովվի մակարդակից ավելին: Եկեղեցին հետզհետե կսկսի ներկայացնել հովվի պարկերը ավելին, քան Աստծո պարկերը:

### ***Աստծո մշտական գործելակերպը***

Աստծո ժողովուրդը միշտ էլ հասարակվել (արարվել) են Աստծո Խոսքով: Ծննդոց 1-ում արարչագործությունից մինչև Ծննդոց 12-ի Աբրամի կանչը, Եզեկիել 37-ում չորացած ոսկորների ձորի տեսիլքից մինչև Տիտուս Քրիստոսի կենդանի Խոսքի գալուստը, Աստված միշտ Իր ժողովրդին հասարակել (արարել) է Իր Խոսքով: Ինչպես Պողոսն է գրում Տոմեացիներին, «Ուրեմն հավաքը լսելուց է, և լսելը՝ Աստծո

Խոսքից» (Տոմ.10:17): Կամ, ինչպես որ նա գրում է Կորնթացիներին, «Եվ քանի որ Աստուծո իմաստության մեջ աշխարհն իր իմաստությամբ չհանաչեց Աստուծուն, Աստված էլ հաճեց քարոզության հիմարությամբ փրկել նրանց, ովքեր կհավատան» (1 Կորնթ.1:21):

Ննչում է կարծես բացատրական քարոզը հաճախ եկեղեցում հանդիսանում է իրական աճման ակունք: Մարթին Լյութերն եկավ այն եզրահանգման, որ բարեփոխումն սկսվեց Աստուծո Խոսքին ուշադրությամբ հեպնելու արդյունքում:

### ***Վերադարձ դեպի երկրպագության սիրտ***

Լոնդոնի եկեղեցիներից մեկում Պուրիտանիզմի մասին մի ամբողջ օր սեմինարին դասավանդելու ընթացքում նշեցի, որ Պուրիտան քարոզները երբեմն տևում էին երկու ժամ: Դասարանի աշակերպներից մեկը բարձրաձայն հնչեց հարցրեց. «Այդ դեպքում որքան ժամանակ կարող էր մնալ երկրպագությանը»: Պարզ էր, որ այդ մարդը ենթադրում էր, որ Աստուծո Խոսքի քարոզ լսելը իրենից երկրպագություն չի ներկայացնում: Ես պարասխանեցի, որ անցյալ դարերում շատ անգլիացի Բողոքականներ հավատում էին, որ իրենց երկրպագության ամենաիմաստական մասը կազմում էր իրենց մայրենի լեզվով Աստուծո Խոսքի *լսելը* (ազատություն, որը գնվել էր մեկից ավելի մարտիրոսների արյան գնով) և իրենց կյանքում դրան *արձագանքելը*: Արդյո՞ք նրանք ժամանակ ունեին երգելու համար, թե ոչ, չնայած որ երգելն ամբողջովին աննշանակալի չէր, սակայն դա նրանց համար համեմատաբար շատ ավելի քիչ անհանգստացնող էր:

Մեր եկեղեցիները նույնպես պետք է վերականգնեն երկրպագության մեջ Խոսքի կենտրոնական դիրքը: Երաժշտությունը աստվածաշնչորեն պահանջվող արձագանքն է Աստուծո Խոսքին, սակայն երաժշտությունը Աստուծուց մեզ չի փրկել, որպեսզի դրա վրա կառուցենք մեր եկեղեցիները: Եկեղեցին, որը կառուցված է որնիցէ ոճի երաժշտության վրա, կառուցված է շարժվող ավազի վրա:

Քրիստոնյա՛, աղոթի՛ր քո հովվի համար, որ նվիրվի Սուրբ Գրքի ճշգրիտ, մանրակրկիտ և լուրջ ուսումնասիրությանը: Աղոթի՛ր, որ

Աստված առաջնորդի նրան Խոսքը հասկանալու, իր իսկ կյանքում և եկեղեցու կյանքում իմաստությամբ կիրառելու մեջ (Կրճ. 24:27; Գործք 6:4; Եփես.6:19-20): Նաև ժամանակ շնորհեք ձեր հովվին շաբաթվա ընթացքում լավ քարոզներ պատրաստելու համար: Քարոզչությունը հովվության *հիմնական* բաղկացուցիչ մասն է հանդիսանում: Այա քաջալերեք նրան, ասելով, թե ինչքան է նրա Աստծո Խոսքի հանդեպ ցուցաբերած հավատարմությունը օգնել ձեզ աճելու Աստծո շնորհքի մեջ:

Նովիվ, աղոթե՛ք այս բաները ձեր համար: Աղոթե՛ք նաև ձեր հարևանությամբ, ձեր քաղաքում, ազգում և աշխարհով մեկ գտնվող ուրիշ եկեղեցիների համար, որոնք քարոզում և սովորեցնում են Աստծո Խոսքը: Վերջապես, աղոթե՛ք, որ մեր եկեղեցիները նվիրվեն Աստծո Խոսքի բացառական քարոզներ լսելուն, որպեսզի յուրաքանչյուր եկեղեցու օրակարգ հետզհետե ավելի ձևավորվի Աստծո Խոսքով Աստծո օրակարգի համեմատ: Բացառական քարոզին նվիրվելը առողջ եկեղեցու հիմնական նշաններից մեկն է:

**ԱՌՈՂՋ ԵԿԵՂԵՑՈՒ ՆԻՄՆԱԿԱՆ  
ՆՇԱՆՆԵՐԻՑ.  
ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ  
ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

**Ի՞նչ եք կարծում,** ինչ են նշանակում այս շեղագիր բառերը. «Բայց գիտենք, որ երբ Նա հայրնվի, *Նրա նման պիտի լինենք*, բանի որ Նրան փեսնելու ենք այնպես, ինչպես որ Նա է» (1 Նովհ.3:2):

Եթե ուշադիր կարդաք երրորդ գլխում ներկայացված աստվածաշնչյան պատմաշարին, ապա հավանաբար կհմանայիք, որ այս խոսքերը մատնացույց են անում, թե ինչպես է եկեղեցին՝ հակառակ մեղքի մոլորեցնող ազդեցության, ժամանակի ավարտին հստակորեն արտացոլելու Աստծո սիրող և սուրբ բնավորությունը:

Մինչդեռ, եթե դուք նստած լինեիք Մորմոնների խորանում, ձեզ կբացատրեին, որ «Նրա նման պիտի լինենք» խոսքերը նշանակում են, որ մենք բոլորս էլ դառնալու ենք աստվածներ:

Ո՞րն է այս երկու մեկնաբանությունների փարբերությունը: Առաջինը փրկելիցված է ամբողջ Աստվածաշնչի աստվածաբանությամբ, իսկ մյուսը՝ ո՛չ:

Վերջին գլխում ասացինք, որ բացատրական քարոզը հիմնարար նշանակություն ունի եկեղեցու առողջության համար: Չնայած դրան, բազմաթիվ մեթոդներ, ինչպես որ հարմար է, բաց են չարաշահելու համար: Մեր եկեղեցիները պետք է անհանգստանան ոչ միայն *ինչպես* են մեզ սովորեցնում հարցի շուրջ, այլ նաև՝ *ինչ* են սովորեցնում: Այդ իսկ պարճառով առողջ եկեղեցու երկրորդ հիմնական նշանը հնչում է որպես աստվածաշնչյան աստվածաբանություն կամ աստվածաբանություն, որը աստվածաշնչային է: Այլա-

պես մենք կմեկնաբանենք համարներն այնպես ինչպես, որ մենք ենք կամենում, որ դրանք մեկնաբանվեն:

### ***Ողջամտությունը***

*Ողջամտությունը* մի հնաոճ բառ է: Սակայն մենք պետք է փայփայենք այս բառը՝ ողջամտություն Աստվածաշնչի Աստծուն և մեր հետ Նրա վարվելակերպը հասկանալու մեջ: Պողոսը բազմիցս կիրառում է «ողջամիտ» բառը Տիմոթեոսին և Տիտոսին ուղղված իր հովվական նամակներում: Այն նշանակում է «վարահեղի», «ճշգրիտ» կամ «հավարարիմ»: Այս բառի արմատը վերցված է բժշկական բնագավառից, որը նշանակում է ամբողջական կամ առողջ: Ներկաբար աստվածաշնչորեն ողջամիտ աստվածաբանությունը մի աստվածաբանություն է, որը հավարարիմ է ամբողջ Աստվածաշնչի ուսմունքին: Այն հստակ և ճշգրիտ մեկնաբանում է հաստատվածները ամբողջ Աստվածաշնչի լույսի ներքո:

Տիմոթեոսին ուղղված իր առաջին նամակում Պողոսն ասում է, որ «*ողջամիտ* վարդապետությունը» «համաձայն ավերարանի է» և հակառակվում է ամբարշտությանն ու մեղքին (1Տիմ.1:10-11): Ավելի ուշ նա հակադրում է «կեղծ վարդապետությունները» «մեր Տեր Նիսուս Քրիստոսի *ողջամիտ* խոսքերի և այն վարդապետության» հետ, «որն աստվածապաշտության համաձայն է» (1 Տիմ.6:3):

Տիմոթեոսին ուղղված իր երկրորդ նամակում Պողոսը հորդորում է նրան, «Ինչ ինձանից լսեցիր, ամուր պահիր, որպես *ողջամիտ* խոսքերի օրինակ՝ հավարով ու սիրով, որ Քրիստոս Նիսուսի մեջ է» (2Տիմ.1:13): Այնուհետև զգուշացնում է Տիմոթեոսին, որ «կգա ժամանակ, երբ *ողջամիտ* վարդապետությանը չպիտի անսան, այլ իրենց ցանկությունների համաձայն վարդապետներ պիտի հավաքեն իրենց շուրջը՝ իրենց ուզածը լսելու մարմաջով» (2 Տիմ.4:3):

Երբ Պողոսը գրում է Տիտոսին՝ մեկ այլ երիտասարդ հովվի, նա կիսվում է նմանապիպ մտածողությամբ: Յուրաքանչյուր մարդու, որ Տիտոսը նշանակելու էր եկեղեցու երեց, Պողոսն ասում է, որ պետք է «ամուր պահի հավարի Խոսքը, ինչպես իրեն ուսուցանվել է, որ կարողանա *ողջամիտ* վարդապետությամբ և՛ հորդորել, և՛ ընդդի-

մադիրներին համոզել» (Տիմոս 1:9): Կեղծ վարդապետները պետք է հանդիմանվեն, «որպեսզի հավարի մեջ առողջ (անգլ.՝ *ողջամիտ*) լինեն» (Տիմոս 1:13): Եվ վերջապես, Տիմոսը պետք է «խոսի այն, ինչ վայել է *ողջամիտ* վարդապետությանը» (Տիմոս 2:1):

Նովիվները պարտավոր են սովորեցնել ողջամիտ վարդապետություն, որը վստահելի է, ճշգրիտ և հավատարիմ Աստվածաշնչին: Իսկ եկեղեցիները պարասխանապու են իրենց հովիվներին հաշվետու պահելու ողջամիտ վարդապետության առջև:

### ***Միաբանություն, բազմազանություն և բարեգործություն***

Մենք չենք կարող այսպեղ գրել այն բոլոր սահմանումները, որոնք վերաբերում են ողջամիտ վարդապետությանը, այլապես պետք է վերաբարադրենք ամբողջ Աստվածաշունչը այս գրքում: Սակայն գործնականում, յուրաքանչյուր եկեղեցի ինքն է որոշում, թե որտեղ է պահանջվում լիակատար համաձայնություն, որտեղ՝ սահմանափակ անհամաձայնություն, և թե որտեղ է թույլ տրալիս լիակատար ազատություն:

Վաշինգտոնում գրնվող եկեղեցում, որտեղ ծառայում են, պահանջում ենք, որ յուրաքանչյուր անդամ հավատա, որ փրկությունը միայն Տիմոս Քրիստոսի կատարած գործի միջոցով է: Մենք նաև այդ նույն բանը (կամ նմանապիպ բան) դավանում ենք հավատացյալի մկրտության հասկացության և եկեղեցու կառուցվածքի վերաբերյալ (այսինքն, որոշումներ կատարելիս վերջին խոսքն ասողի): Մկրտության և եկեղեցու կառուցվածքի հետ կապված համաձայնագիրը արմատապես կարևոր չի փրկության համար, սակայն գործնականապես օգտակար է և առողջարար եկեղեցու կյանքի համար:

Մյուս կողմից, մեր եկեղեցին թույլ է տրալիս որոշակի անհամաձայնություններ այնպիսի հարցերի շուրջ, որոնք ո՛չ փրկության և ո՛չ էլ եկեղեցու գործնական կյանքում անհրաժեշտ պայմաններ չեն հանդիսանում: Մենք բոլորս էլ համաձայն ենք, որ Քրիստոսը վերադառնալու է, սակայն Նրա վերադարձի ժամանակի հետ կապված գոյություն ունեն մի շարք փարբեր կարծիքներ:

Վերջապես, մեր եկեղեցին լիակատար ազատություն է Կալիսայնայիսի հարցերի շուրջ, որոնք ոչ այնքան կարևոր նշանակության են կամ ոչ այնքան հստակեցված, ինչպես օրինակ գինված պաշտպանության իրավունքի հարցը կամ Եբրայեցիներին ուղղված նամակի հեղինակի հարցը:

Այս բոլորին միավորում է մի սկզբունք. որքան ավելի մոտենում ենք մեր հավատքի սրբին, այնքան ավելի շատ ենք ակնկալում միաբանություն հավատքի վերաբերյալ մեր հասկացողության մեջ՝ ողջամիտ աստվածաշնչյան վարդապետությամբ: Վաղ շրջանի եկեղեցին այսպես էր սահմանում. կարևոր բաներում՝ միաբանություն, անկարևորում՝ փարբերություն, ամեն ինչում՝ ողորմություն (կարեկցանք):

### ***Բա՛րդ, թե հակասական վարդապետություններ***

Եկեղեցին, որը նվիրված է ողջամիտ վարդապետության ուսուցմանը, կնվիրվի սովորեցնելու այն աստվածաշնչյան վարդապետությունները, որոնք շատ հաճախ եկեղեցիները անտեսում են: Մեր աչքերով, որոշ վարդապետություններ հնարավոր է դժվար թվան կամ նույնիսկ պառակտիչ (բաժանարար): Չնայած դրա, մենք կարող ենք վստահել, որ Աստված դրանք ներառել է Իր Խոսքի մեջ, քանի որ դրանք հիմնարար են փրկության Իր գործը հասկանալու համար:

Սուրբ Նոգին հիմար չի: Եթե նա հայտնել է իր Գրքի մեջ ինչ-որ բան ամբողջ աշխարհի համար, որ կարդան, ապա եկեղեցիները չպետք է կարծեն, որ իրենք այնքան իմաստուն են, որ ավելի լավ է խուսափեն որոշ թեմաների շուրջ խոսելուց: Արդյո՞ք նրանք պետք է գործադրեն հովվական իմաստություն և հոգաբարություն, երբ խոսում են որոշ թեմաների շուրջ: Անշո՛շտ: Արդյո՞ք պետք է, որ կարարելապես խուսափեն այդ թեմաներից: Իհարկե, ո՛չ: Եթե ուզում ենք ունենալ այնպիսի եկեղեցիներ, որոնք առաջնորդվում են Աստվածաշնչից բխող ողջամիտ վարդապետությամբ, ապա պետք է անդրադառնանք Աստվածաշնչի բոլոր թեմաներին:



Օրինակ, ընտրության մասին աստիճանաբար վարդապետությունից շարք հաճախ խուսափում են, որպես բարդ կամ չափազանց շփոթեցնող թեմա: Սակայն անհերքելի է, որ այս վարդապետությունը աստիճանաբար է: Չնայած ամեն ինչ չէ, որ հասկանում ենք ընտրության հետ կապված, սակայն անկարևոր չէ այն հարցը, թե արդյոք մեր փրկությունը Աստուծոց է կախված, թե մեզանից:

Գոյություն ունեն մի շարք կարևոր հարցեր, որոնց Աստիճանաբար պարասխանում է, սակայն եկեղեցիները ընդհանրապես դրանք անտեսում են, ինչպես օրինակ.

- Նիսանականում մարդիկ վաղն են, թե՛ լավը: Նրանք միայն քաջալերանքի և ինքնավստահության կարիք ունեն, թե՛ ներման և նոր կյանքի:
- Ի՞նչ արեց Տիմոս Քրիստոսը խաչի վրա մեռնելով: Արդյո՞ք Նա իրականում և ճիշտ կերպով բավարարեց Տայր Աստուծո արդար բարկությունը, թե միայն ինքնագոհողության օրինակ ծառայեց Իր հետևորդների համար:
- Ի՞նչ է կատարվում, երբ ինչ-որ մեկը Քրիստոսնյա է դառնում:
- Եթե մենք Քրիստոսնյաներ ենք, կարո՞ղ ենք վարահ լինել, որ Աստիճան կշարունակի հոգալ մեզ համար: Եթե այդպես է, ապա Նա այդ հոգաբարությունը հիմնված է մեր հավատարմության, թե՛ Իր հավատարմության վրա:

Այս բոլոր հարցերը պարզապես միայն գրքասեր աստիճանաբանների համար չեն կամ ճեմարանի երիտասարդ ուսանողների համար: Դրանք կարևոր են յուրաքանչյուր Քրիստոսնյայի համար: Մեր մեջ եղող հովիվները գիտեն, թե մեր ժողովրդին հովվելը ինչքան կտարբերվեր, եթե վերը նշված յուրաքանչյուր հարցի մեր պարասխանները փոխվեին: Սուրբ Գրքի հանդեպ ունեցած մեր հավատարմությունը պահանջում է, որ խոսենք այս հարցերի շուրջ հստակ և իշխանությամբ, ինչպես որ մեր փափագն է արտացոլելու Աստուծո բնավորությունը իր ամբողջ կատարելությամբ:

Պարզապես պարկերացրեք. եթե ուզում ենք եկեղեցիներ, որոնք Աստուծո բնավորությունն են արտացոլում, ապա մի՞թե չենք ցանկանա իմանալ ամեն ինչ, որ Նա հայտնել է Իր մասին Աստիճանաբար:

ծաշնչում: Եվ ի՞նչ է այն ասում Իր բնավորության շուրջ մեր կարծիքի մասին, եթե մենք չենք ցանկանում:

### ***Ասործո գերիշխանությանը հակառակվելը***

Այն ինչ մենք հասկանում ենք Ասործո մասին աստվածաշնչյան ուսմունքներից, շար կարևոր է: Ասվածաշնչյան Աստվածը Արարիչ և Տեր է: Մինչդեռ Նրա գերիշխանությունը երբեմն ուրացվում է, անգամ եկեղեցու շրջանակներում: Երբ ապաշխարած Քրիստոնյաները հակառակվում են արարչագործության կամ փրկության մեջ Ասործո գերիշխանության գաղափարին, նրանք իրականում խաղում են բարեպաշտ հեթանոսություն: Քրիստոնյաները իրականում պիտի ունենան Ասործո գերիշխանության շուրջ անկեղծ հարցեր: Սակայն Ասործո գերիշխանությունը հասարակապես և համառոտեն ուրանալը մեզ արդեն պետք է անհանգստացնի: Մկրտել այսպիսի մարդու նշանակում է մկրտել մեկի, որն ինչ-որ առումով դեռևս մնում է անհավատության մեջ: Այսպիսի մարդուն անդամագրելը նշանակում է վերաբերվել նրան այնպես, կարծես թե վստահում է Ասործուն, երբ իրականում այդպես չէ:

Այսպիսի հակառակությունը ցանկացած Քրիստոնյայի համար էլ վրանգավոր է, սակայն շար ավելի վրանգավոր է եկեղեցու առաջնորդի համար: Երբ եկեղեցին առաջնորդ է նշանակում մի այնպիսի մարդու, որը կասկածում է Ասործո գերիշխանության վրա կամ սխալ է հասկանում աստվածաշնչյան ուսմունքները, այդ եկեղեցու համար իրեն օրինակ է ծառայում մի մարդ, որը խորին դժկամություն է ցուցաբերում Ասործուն վստահելու մեջ: Իսկ սա արգելք է հանդիսանում այդ եկեղեցու աճման համար:

Այսօր շար հաճախ մեր շուրջը փրոդ սպառողի մրաձեղակերպն ու նյութապաշտ մշակույթը հորդորում է եկեղեցիներին հասկանալու Նոգու գործը շուկայական փերմիիններով և ավերարանջությունը վերածում գովազդի: Կարծես թե Աստված Ինքը մարդու պարկերով ստեղծված լինի: Այսպիսի դեպքերում առողջ եկեղեցին պետք է հարկապես զգույշ լինի աղոթելու, որ իր առաջնորդներն ունենան Ասործո գերիշխանության մասին աստվածաշնչյան և փոր-

ձառաբար վերապրած գիտակցում: Պեպք է նաև աղոթի, որ իր առաջնորդներն ամբողջովին նվիրվեն ողջամիտ վարդապետությանը՝ իր լիակատար և աստվածաշնչյան փառքի մեջ: Առողջ եկեղեցին աչքի է ընկնում իր բացատրական քարոզությամբ և սուրբ գրային աստվածաբանությամբ:

**ԱՌՈՂՋ ԵԿԵՂԵՑՈՒ ՆԻՄՆԱԿԱՆ  
ՆՇԱՆՆԵՐԻՑ.  
ԲԱՐԻ ԼՈՒՐԻ ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ  
ՆԱՍԿԱՅՈՂՈՒԹՅՈՒՆԸ**

**Մեր եկեղեցիների** համար շար կարևոր է ունենալ ողջամիտ աստվածաշնչյան աստվածաբանություն, հարկապես այս ասպարեզում. Տիտու Քրիստոսի բարի լուրի՝ Ավերարանի, մեր հասկացողության մեջ: Ավերարանը Քրիստոսության սիրտն է, ուստի և պետք է լինի մեր եկեղեցիների սիրտը:

Առողջ եկեղեցում յուրաքանչյուր անդամ՝ երիտասարդ, թե՛ ծեր, հասուն, թե՛ նորահավատ, միաբանվում է Տիտու Քրիստոսի միջոցով փրկության հրաշալի բարի լուրի շուրջ: Աստվածաշնչյան ցանկացած հարված մարնացույց է անում Ավերարանը կամ Ավերարանի որևէ մի բաժին: Ուստի եկեղեցին ամեն շարաթ հավաքվում է լսելու Ավերարանը ևս մեկ անգամ: Բարի լուրի աստվածաշնչյան հասկացողությունը պետք է փոխանցվի յուրաքանչյուր քարոզի, մկրտության և հաղորդության, երգի, աղոթքի և խոսակցության միջոցով: Եկեղեցու կյանքում ամեն ինչից առավել առողջ եկեղեցու անդամները աղոթում և փափագում են ավելի խորը հասկանալու այս Ավերարանը: Ինչո՞ւ, քանի որ Ավերարանի հույսը Քրիստոսի դեմքով Աստծո փառքի իմացության հույսն է (2 Կորն.4:4-6): Դա Նրան պարզ տեսնելու և կարարելապես ճանաչելու հույսն է՝ ինչպես մենք կարարելապես ճանաչվեցինք (1 Կորն.13:8): Դա Նրա նման դառնալու հույսն է, ինչպես որ մենք տեսանք Նրան (1 Նովհ.3:2):

## ***Ավերարանի հիմունքները***

Ավերարանն այն լուրը չէ, որ մեր հետ ամեն ինչ լավ է: Ոչ էլ այն լուրն է, որ Աստված սեր է: Այն լուրն էլ չէ, որ Տիտուսն ուզում է մեր ընկերը լինել կամ այն, որ Նա մի հրաշալի ծրագիր կամ նպատակ ունի մեր կյանքի համար: Ինչպես որ առաջին գլխում քննարկեցինք ավելի լայն մասշտաբով, Ավերարանը բարի լուր է այն մասին, որ Տիտուս Քրիստոսը մահացել է խաչի վրա որպես մեղավորների համար փոխանորդական գոհ և հարություն է առել՝ ճանապարհ բացելով մեզ համար Աստծո հետ հաշտվելու: Դա այն լուրն է, որ Դավաժանը կղաթնա Տայր, եթե միայն ապաշխարենք ու հավատարանք: (Ավելի ամբողջական բացատրության համար վերադարձեք գլուխ 1):

Ահա չորս կետեր, որոնք փորձում են հիշել, երբ վկայում են Ավերարանը, լինի դա անհատի կամ հարության առջև՝ 1)Աստված, 2)մարդ, 3)Քրիստոս և 4)արձագանքը: Այլ խոսքերով.

- Բացատրել են արդյո՞ք, որ Աստված մեր սուրբ և ինքնիշխան Արարիչն է:
- Արդյո՞ք հստակեցրել են, որ մենք՝ մարդիկ, մի փարօրինակ խառնուրդ ենք հրաշալի կերպով Աստծո պատկերով ստեղծված, մինչդեռ անավոր կերպով ընկած, մեղավոր և Նրանից բաժանված:
- Արդյո՞ք բացատրել են, թե ով է Տիտուսը և թե ինչ էՆա արել, որ Նա է մարդ-Աստվածը, որը եզակի և բացառիկ կերպով կանգնած է մարդու և Աստծո միջև որպես փոխանորդ և հարուցյալ Տեր:
- Եվ վերջապես, եթե անգամ ես խոսել եմ այս բոլոր բաների մասին, արդյո՞ք հստակ սահմանել եմ, որ փվյալ մարդը պետք է արձագանքի Ավերարանին և պետք է հավատա այս պատգամին և ուրեմն եր դառնա իր անձնակենսոյուն կյանքից ու մեղքից:

Երբեմն գայթակղիչ է Ավերարանից մի քանի իրականում շար օգրակար բաներ չներկայացնել *որպես* հենց Ավերարան: Իսկ այս օգրակար բաները հակված են լինելու ոչ Քրիստոնյաների համար բնականորեն ցանկալի բաներ՝ ինչպես ուրախությունը, խաղաղությունը, երջանկությունը, կարարելությունը, ինքնագնահատականը կամ սերը: Մինչդեռ այս բաները *որպես* Ավերարան ներկայացնելը նշանակում է ճշմարտության մի մասը ներկայացնել: Եվ ինչպես Ջ. Ի. Պարկերն է ասում, «Կես ճշմարտությունը քողարկված որպես լրիվ ճշմարտություն դառնում է կարարյալ կեղծիք»<sup>1</sup>:

Սկզբունքորեն, մենք կարիք չունենք պարզապես ուրախության կամ խաղաղության կամ էլ նպատակի: Մենք հենց Աստուծո կարիքն ունենք: Քանի որ մենք դարապարտյալ մեղավորներ ենք, ապա ամեն ինչից առավել ներման կարիք ունենք: Մենք հոգևոր կյանքի կարիք ունենք: Երբ Ավերարանը համարձակ չենք ներկայացնում, դրանով միայն կեղծ ապաշխարություններ և եկեղեցու առավել անիմաստ անդամության ցուցակներ ենք հայցում, որոնք երկուսն էլ մեր շուրջը գրավող աշխարհում ավերարանչությունը դարձնում են ավելի դժվար:

### ***Ավերարանի հոսքը***

Երբ եկեղեցին առողջ է, իսկ նրա անդամները գիտեն և փայփայում են Ավերարանը ամեն ինչից առավել, նրանք ավելի շար են ուզում վկայել աշխարհին Ավերարանը: Ջորջ Վ. Թրոյերը՝ անցյալ սերնդի մի մեծ Քրիստոնյա առաջնորդ և Տեխաս նահանգի, Դալլաս քաղաքի Առաջին Մկրտական Եկեղեցու հովիվն ասել է.

Ամենամեծ մեղադրանքը, որ կարող եք հնչեցնել որևէ եկեղեցու հասցեին այն է, որ այդ եկեղեցին մարդկային հոգիների համար կրակի և կարեկցանքի պակաս ունի: Եկեղեցին ոչնչով ավելի լավը չի էթիկա սովորեցնող ակումբից, եթե նրանից կարեկցանք չի հորդում կորած հոգիների համար, և եթե նա դուրս չի գալիս փնտրելու կորած հոգիներին դեպի Տիտու Քրիստոսի գիտությանը ուղղելու:<sup>2</sup>

Այսօր մեր եկեղեցիների անդամները անց են կացնում շատ ավելի ժամանակ իրենց րներում, գրասենյակներում և հեռու հարևանության մեջ գտնվող ոչ Քրիստոնյաների հետ, քան թե կիրակի օրերը այլ Քրիստոնյաների հետ՝ հանգիստ թողնելով ոչ Քրիստոնյաներին: Ավերարանջությունը լոկ ինչ-որ մեկին եկեղեցի հրավիրելը չէ: Մեզանից յուրաքանչյուրը Քրիստոսի մեջ ունի փրկության մեծ լուրը: Եկե՛ք չփոխանակենք այն ոչ մի ուրիշ բանով: Եկե՛ք այսօր վկայենք Ավերարանը:

Առողջ եկեղեցին գիտի Ավերարանը և առողջ եկեղեցին վկայում է այն:

## ՆԱՄԱՌՈՑ ԱԿՆԱՐԿ. ԻՆՉՊԵՄ ԳՏՆԵԼ ԼԱՎ ԵԿԵՂԵՑԻ

1. Աղոթք:
  2. Խորհուրդ հարցրեք աստվածապաշտ հովվից (կամ երեցից):
  3. Ճշտեք, թե ինչն էք առաջնային համարում ձեր կյանքում:
    - Ավերարանը պետք է իրապես հաստատվի, հսրակ քարոզվի և հավատարմորեն կիրառվի կյանքում: Ավերարանի այս դրսևորումներից որևէ մեկի լուրջ բացակայությունը շատ վրանգավոր է:
    - Քարոզը պետք է համապատասխանի Սուրբ Գրքին, անձնական մարտահրավեր ունենա, և համայնքի կյանքի համար կենսորոնական դեր խաղա:
    - Նաև շատ կարևոր է նկատի առնել, թե ինչպես է եկեղեցին կանոնավորում (իրականացնում) մկրտությունը, Տիրոջ Ընթրիքը, եկեղեցու անդամագրությունը, եկեղեցու կարգապահությունը, և թե ում է պատկանում եկեղեցում որոշում կայացնելիս վերջին խոսքը:
    - Նակիրճ, կարդացեք այս գրքի 5-13 գլուխները:
  4. Նարցրեք ձեր ախտորոշիչ հարցերը, ինչպես օրինակ.
    - Կուզեի՞ արդյոք իմ ապագա ամուսինը լիներ այս եկեղեցու ուսմունքի ներքո մեծացած մեկը:
    - Քրիստոնեության ինչպիսի՞ պատկեր կարող են տեսնել իմ երեխաները այս եկեղեցում՝ փարբերվո՞ղ, թե այս աշխարհին շատ նման:
    - Արդյո՞ք կարող եմ ուրախությամբ հրավիրել այս եկեղեցի ոչ Քրիստոնյաների: Այսինքն, արդյո՞ք նրանք հսրակ կլսեն Ավերարանը և կտեսնեն, որ մարդկանց կյանքերը համապատասխանում են Ավերարանին: Արդյո՞ք այդ եկեղեցին ոչ Քրիստոնյաներին հյուրընկալելու և ձեռք մեկնելու սիրտն ունի:
    - Արդյո՞ք այս եկեղեցին այն վայրն է, որտեղ ես կարող եմ ծառայել:
  5. Նկատի առեք տեղանքը: Արդյո՞ք եկեղեցու հեռավորությունը ձեր քնից հարմար է, թե եկեղեցու կյանքում ձեր հաճախակի ներգրավվածության և ծառայության համար հուսահատեցնող: Եթե դուք տեղափոխվում եք մի նոր թաղամաս, նախքան ձեզ համար տուն գնելը փորձեք տեղանքում գտնել մի լավ եկեղեցի-տուն:
-



ՄԱՍ 3

**ԱՌՈՂՋ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱՐԵՎՈՐ  
ՆՇԱՆՆԵՐԸ**

# ԱՌՈՂՋ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱՐԵՎՈՐ ՆՇԱՆՆԵՐԸ

**Քանի որ այս գրքում** նշված բոլոր իննը նշանները աստվածաշնչյան են, դրանք Քրիստոսի եկեղեցիների համար հեղինակություն ունեն: Մինչդեռ *հիմնական* և *կարևոր* նշանների միջև եղած տարբերությունը պետք է մեզ հիշեցնի, որ սրբագործումը՝ եկեղեցու և անհարի կյանքում, դանդաղ է տեղի ունենում: Ինչպես Աստված կանչել է մեզ համբերությամբ մեծացնել մեր երեխաներին, այնպես էլ կանչել է համբերություն ցուցաբերել մեր եկեղեցիների հանդեպ:

Այն ինչ կոչում են *կարևոր* նշաններ կարևոր են, գոնե երբ դրանք առանձին են նկարի առնվում, սակայն դրանց բացակայությունը չի հարկադրում լքել եկեղեցին (թեև իմաստուն կլիներ այդպես վարվել): Ավելին, եկեղեցիները առանց այս կարևոր նշանների կարող են դառնալ աղոթավայր, համբերություն ցուցաբերելու վայր, և սեփական կյանքի օրինակով լավ օրինակ ծառայելու վայր:

Եթե մի հովիվ ինձ հարցնի, թե ինչքան ժամանակ պետք է համբերելու մի ոչ աստվածաշնչյան առաջնորդական կազմի, կամ եթե մի Քրիստոնյա հարցնի ինձ, թե որքան պետք է անտեսի եկեղեցում կարգապահություն կիրառելու մշտական ձախողումները, կամ, եթե մի սարկավազ հարցնի ինձ, թե որքան ժամանակ է պետք համբերելու եկեղեցու անդամության սխալ դրսևորմանը, ես կարող եմ շար լավ քաջալերել այս սուրբերին համբերաբար լինելու, աղոթելու, բարի օրինակ ծառայելու, սիրելու և սպասելու: Աճը դանդաղ է տեղի ունենում: Իսկ եկեղեցին մարդիկ են՝ մարդիկ, որոնց կանչված ենք

ներելու, քաջալերելու, ծառայելու, երբեմն և զգուշորեն կոչ անելու և ամենակարևորը՝ սիրելու:

Ինչպես որ այս կյանքում գոյություն չունեն կատարյալ Քրիստոնյաներ, այնպես էլ գոյություն չունեն կատարյալ եկեղեցիներ: Նույնիսկ լավագույն եկեղեցիներն են ձախողում իդեալական լինելու հարցում: Ո՛չ ճիշտ քաղաքականությունը, ո՛չ համարձակ քարոզները, ո՛չ զահաբերության նվիրվածությունները, և ո՛չ էլ վարդապետական ողջամտությունը չեն կարող երաշխավորել, որ այդ եկեղեցին կձաղկի: Այնուհանդերձ, ցանկացած եկեղեցի կարող է ավելի առողջ լինել, քան հիմա է: Այս կյանքում մենք երբեք չենք տեսնում մեղքի վրա կատարյալ հաղթանակը: Սակայն որպես Աստծո ճշմարիտ զավակներ չենք հանձնվում այս պայքարի մեջ: Եկեղեցիները նույնպես չպետք է հանձնվեն պայքարի մեջ: Քրիստոնյաները, հատկապես հովիվներն ու առաջնորդները, պետք է ցանկանան և ձգտեն տեսնելու ավելի առողջ եկեղեցիներ:

Գ Լ Ո Ւ Խ Ո Ւ Թ

**ԱՌՈՂՋ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱՐԵՎՈՐ  
ՆՇԱՆՆԵՐԻՑ.**

**ԴԱՐՁԻ ԳԱՆՈՒ ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ  
ՆԱՍԿԱՑՈՂՈՒԹՅՈՒՆԸ**

**Իմ եկեղեցու առաջին** ժողովի ժամանակ, 1878 թ.-ին, եկեղեցին որդեգրում է հավատքի դավանանքը: Դա 1833 թ.-ի Նյու Նամփշիրի Նավատրքի Դավանանքի առավել ամրագրված փարբերակն էր: Նին լեզուն հնարավոր է որոշ չափով կոպիտ է հնչում, սակայն փորձեր այն հասկանալ: Այս դավանանքի VIII հոդվածն ասում է.

Մենք հավատում ենք, որ Ապաշխարությունն ու Նավատրքը սուրբ պարտականություններ են, ինչպես նաև անբաժանելի շնորհքներ՝ գրված մեր հոգիներում Աստծո Նոգով՝ վերստին ծննդյան միջոցով, ուստի և խորին համոզվածություն ունենալով մեր հանցանքի, վրանգի և անօգնականության մեջ և Քրիստոսի փրկության ճանապարհի մեջ, մենք դառնում ենք Աստծուն անկեղծ զղջմամբ, խոստովանությամբ և ողորմության համար աղերսանքով. միևնույն ժամանակ սրբանց ընդունելով Տեր Նիսուս Քրիստոսին որպես մեր Մարգարեի,

Քահանայի և Թագավորի, և միայն Նրան վարահելով որպես միակ և ամենակարող Փրկչի:

Ոչ շար մարդիկ են արդեն այսպես գրում կամ կարդում (քնօրինակը փրված է հին անգլերենով): Սակայն այսպեղ գրնվող աստվածաշնչյան ճշմարտությունները չեն փոխվել: Առողջ եկեղեցին աչքի է ընկնում դարձի գալու աստվածաշնչյան իր հասկացողությամբ:

### ***Մեր Գործը***

Այս դավանանքը սկսում է ապաշխարության և հավաքքի աստվածաշնչյան կոչով: Ինչպես որ Տիտուսը Իր ծառայության սկզբում պարվիրեց, «Ապաշխարե՛ք և Ավերարանին հավաքացե՛ք» (Մարկ.1:15): Ամենապարզ փերմիսներով դարձի գալը հավասար է ապաշխարության և հավաքքի:

Այս դավանանքն իր շարունակության մեջ ապահովում է ապաշխարության և հավաքքի մասին մանրամասն նկարագրություններ: Այն ասում է մենք «դառնում ենք» Աստծուն մեր մեղքից, «ընդունում ենք» Քրիստոսին, և «վարահում ենք» միայն Նրան, որպես ամենակարող Փրկչի: Նոր Կրակարանը լի է մեղավորներին նկարագրող պարմություններով, որոնք թողնում են իրենց մեղքը, ընդունում Քրիստոսին և միայն Նրան ապավինում: Տիշե՛ք հարկահավաք Ղևիին, որը Քրիստոսին հեփնելու համար թողեց իր գործը, կամ ջրհորի մոտ գրնվող կնոջը, կամ հռոմեացի հարյուրապետին, կամ Պեպրոսին, Նակորոսին և Նովիաննեսին, կամ Սողոսին՝ Քրիստոնյաներ հալածողին, որը դարձավ Պողոս՝ հեթանոսների առաքյալ: Այս ցանկը երկար է: Նրանցից յուրաքանչյուրն էլ դառնում է Աստծուն, վարահում Նրան և հեփնում: Սա՛ է դարձի գալը:

Դարձի գալը դավանանք ընդունելը չէ: Այն ինչ-որ աղոթք ասելը չէ: Ո՛չ էլ հարցազրույց է կամ Արևմուտքի դառնալ: Այն որոշակի փարիքի հասնել ու դասերի հաճախել չէ, կամ էլ հասունության մի ինչ-որ ծիսակարգի միջով անցնել: Այն մի ճամփորդություն չէ, որտեղ բոլորը ցրված են ճանապարհի փարբեր կետերում: Այլ դարձի գալը մեր ամբողջ կյանքով ինքնաարդարացումից դեպի Քրիստոսի արդարացումը դառնալն է, ինքնիշխանությունից դեպի Աստծո իշխանությունը, կռապաշարությունից դեպի աստվածաշարությունը:

### ***Դարձը Աստծո գործն է մեր մեջ***

Սակայն նկատեք, թե նաև ինչ է ասում այս սահմանումը մեր դարձի գալու մասին: Մենք դաձի ենք գալիս, քանի որ «խորապես համոզված ենք մեր հանցանքի, վրանգի և անօգնականության մասին, և Քրիստոսով փրկության ճանապարհի մասին»: Ինչպե՞ս է այն փրկի ունենում: Ո՛վ է մեզ համոզում: Այն «գրվում է մեր հոգիներում Աստծո Նոզով՝ վերստին ծննդյան միջոցով»: Այս սահմանումը վկայակոչում է երկու սուրբ գրային համարներ, որոնք ստատարում են այս գաղափարին.

Երբ լսեցին այս բաները, լռեցին և փառավորում էին Աստծուն և ասում. «Ուրեմն հեթանոսներին նույնպես Աստված կյանքի համար ապաշխարություն փվեց» (Գործք 11:18):

Որովհետև շնորհով եք դուք փրկված հավաքի միջոցով, և սա ոչ թե ձեզնից է, այլ Աստծո պարգևն է (Եփես.2:8):

Եթե դարձը հասկանում ենք, որպես մեր կողմից կատարված գործ, առանց առաջին հերթին մեր մեջ Աստծո որևէ միջամտության, ապա մենք թյուրիմացության մեջ ենք: Դարձը անշուշտ իր մեջ ներառում է մեր գործողությունը, ինչպես քննարկեցինք: Սակայն

դարձը դրանից շար ավելին է: Մուրբ Գիրքը սովորեցնում է, որ մեր սրտերը պետք է փոխարինվեն, մտքերը՝ նորոգվեն, հոգիները՝ կենդանանան: Մենք սրանցից և ոչ մեկն էլ չենք կարող անել: Յուրաքանչյուր մարդ կարիք ունի մի այնպիսի արմարական փոփոխության, որ միայն Աստված կարող է անել: Նա է մեզ առաջին անգամ սրեղծել, ուստի հենց Ինքն էլ պետք է մեզ նոր սրեղծագործություն դարձնի: Նա էր պատասխանատու մեր բնական ծննդյան համար, ուստի Նա էլ պետք է մեզ նոր ծնունդ տա: Մենք փոխվելու համար Աստծո կարիքն ունենք:

Տասնիններորդ դարի քարոզիչ Չարլզ Սփրջնը մի անգամ պատմություն է պատմում, թե ինչպես մի օր Լոնդոնի փողոցներից մեկով քայլելիս մի հարբած մարդ է մոտենում իրեն և հենվելով մոտակա լամպի սյունին, ասում. «Նե՛յ, պարոն Սփրջն, ես ձեր միջոցով դարձի եկածներից մեկն եմ»:

Սփրջնը պատասխանում է, «Դուք պետք է, որ իմ միջոցով դարձի եկած լինեք, բայց հաստատ ո՛չ Տիրոջ միջոցով»:

### ***Վատ և լավ պտուղ***

Երբ եկեղեցին սխալ է հասկանում դարձի մասին Աստվածաշնչի ուսմունքը, այն կարող է լցվել մարդկանցով, որոնք իրենց կյանքում մի որոշ ժամանակ անկեղծ որոշումներ են կայացրել, սակայն չեն վերապրել արմարական փոփոխություն, որն Աստվածաշունչը կոչում է դարձ:

Իրական դարձը կարող է և չի կարող ներառել զգացմունքային տաք փորձառություն: Մակայն, այն վկայություն *կրաա* իր պտուղով: Արդո՞ք այդ կյանքերը փոփոխության վկայություն են փալիս՝ մի կողմ դնելով հինը և հագնելով նորը: Արդյո՞ք եկեղեցու անդամները շահագրգռված են մեղքի դեմ պատերազմ մղելու, եթե նույնիսկ նրանք շարունակում են սայթաքել: Արդյո՞ք նրանք ցուցաբերում են

նոր հետաքրքրություն՝ վայելելով Քրիստոնյաների հետ հաղորդակցությունը, և միգուցե նոր դրդապատճառներ անհավաքների հետ ժամանակ անցկացնելու մեջ: Արդյո՞ք սկսում են փորձություններին և մարտահրավերներին արձագանքել այլ կերպ, քան այն ժամանակ, երբ դեռ անհավաք էին:

Դարձի ճիշտ հասկացողությունը կերևա ոչ միայն քարոզների մեջ, այլ նաև մկրտության և հաղորդության համար եկեղեցու պահանջարկների մեջ: Նոգաբարությունը կգործադրվի: Նովիվները հարկադրված չեն լինի մարդկանց հապշտապ և առանց քննության մկրտելու:

Այն ակնհայտ կլինի անդամագրության համար եկեղեցու ակնկալիքների միջոցով: Անդամագրվելը անմիջապես չի լինում: Գուցե առաջարկվի անդամության դասեր: Կիսնդրեն, որ փաք ձեր վկայությունը, ինչպես նաև որպես ապագա եկեղեցու անդամ Ավետարանի բացառությունը:

Այն ակնհայտ կլինի բացահայտ մեղքին թեթևորեն նայելու եկեղեցու դժկամության միջոցով: Նաշվեալությունը, քաջալերությունն ու երբեմնի հանդիմանությունը սովորական են, ոչ թե՛ անսովոր: Եկեղեցում պետք է գործի կարգապահություն, որի մասին կխոսենք գլուխ 12-ում:

Առողջ եկեղեցու կարևոր նշաններից մեկն է հասկանալ, թե ինչպես է Աստվածաշունչը ներկայացնում դարձը:



**ԱՌՈՂՋ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱՐԵՎՈՐ  
ՆՇԱՆՆԵՐԻՑ.**

**ԱՎԵՏԱՐԱՆՉՈՒԹՅԱՆ  
ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ  
ՆԱՍԿԱՅՈՂՈՒԹՅՈՒՆԸ**

**Մինչ այժմ** առողջ եկեղեցիներին նկարագրեցինք աչքի ընկնող բացառական քարոզչությամբ, աստվածաշնչյան աստվածաբանությամբ և Ավետարանի ու դարձի գալու աստվածաշնչյան աստվածաբանությամբ: Դա նշանակում է, որ երբ եկեղեցիները չեն սովորեցնում Աստվածաշունչ և ողջամիտ վարդապետություն, ապա դառնում են անառողջ (հիվանդ):

Ինչպիսի՞ն է անառողջ եկեղեցին: Դա մի եկեղեցի է, որտեղ քարոզները հաճախ պարզվում են կլիշեների շուրջ և կրկնվում են: Դրանից ավելի վարն այն է, որ դառնում են բարոյախրապական և եսականարոն, իսկ Ավետարանը դառնում է մի քիչ ավելին քան հոգևոր «ինքնապաշտպանություն» է: Դարձը դիտվում է որպես մարդկության փրարալուծման մի գործողություն: Եվ ըստ փրարբեր համեմատության աստիճանների՝ վարից դեպի ավելի վար, եկեղեցու մշակույթը սկսում է չփրարբերվել իր շրջապատի աշխարհիկ մշակույթից:

Եվ վերջապես այսպիսի համայնքները չեն էլ ազդարարում Նիսուս Քրիստոսի մեծագույն ավերիսը:

## ***Դարձի հասկացողությանը ձևավորված ավերարանչություն***

Մինչ շարունակում ենք խորհրդածելու առողջ եկեղեցու մեկ այլ կարևոր նշան՝ ավերարանչության սուրբ գրային հասկացողությունը, արժե մտածել, թե այս նշանի մասին մեր տեսակետը ինչքանով կձևավորվի նախորդ նշանների մասին մեր հասկացողությամբ (թե՛ *հիմնական*, և թե՛ *կարևոր*), հարկապես դարձի:

Մյուս կողմից, եթե մեր մտքերը ձևավորված լինեն Աստվածաշնչի ուսմունքներով՝ Աստծո և Նրա գործելակերպի մասին, ինչպես նաև Ավերարանի և այն մասին, թե ամենաշատը ինչի կարիք ունեն մեղավոր մարդիկ, ապա դրան ընդհանրապես հաջորդում է ավերարանչության ճիշտ հասկացողությունը: Մենք կփորձենք ավերարանչության մղել սկզբունքորեն հենց Ավերարանի ուսմունքի միջոցով և դրա շուրջ խորհրդածությամբ, ոչ թե Ավերարանը վկայելու համար մեթոդներ սովորելու միջոցով:

Ես միշտ ոգևորվում եմ այն փաստից, թե ինչպես են նորահավար Քրիստոնյաները կարելի է ասել բնածին զիպակցում, որ իրենց փրկությունը ողորմածության արգասիք է: Ննարավոր է անգամ այս վերջին ամիսների ընթացքում լսել եք վկայություններ, որտեղ խոստովանում են, որ իրենց դարձը Աստծո գործն էր (Եփես.2:8-9): «Ես ամբողջովին կորած էի մեղքի մեջ, բայց Աստված...»:

Մյուս կողմից էլ, եթե դարձի գալու մեջ Աստծո կապարած գործի մասին Աստվածաշնչի ասածները մեր եկեղեցիներում անտեսված են, ապա ավերարանչությունը դառնում է մեր ուժերով կապարված մի բան, որպեսզի արդյունքում ունենանք բառացի ապաշխարություններ: Մի նշան, որի միջոցով կարող եք իմանալ, որ եկեղեցին չունի դարձի և ավերարանչության մասին աստվածաշնչյան հասկացողություն այն է, որ Կրկն եկեղեցու անդամության ցանկն ավելի

մեծ է քան հաճախողների թիվը: Այսպիսի եկեղեցին պետք է կանգ առնի և հարց քա իրեն, թե ինչու է իր ավերարանջությունը այսքան մեծ թվով անդամներ բերում եկեղեցի, որոնց երբեք չի փեսնում, սակայն որոնք այնքան վստահ են իրենց փրկության հարցում: Ի՞նչ ասեցինք նրանց այն մասին, թե ինչ է նշանակում Քրիստոսի մեջ աշակերպությունը: Ի՞նչ սովորեցրինք նրանց Աստծո, մեղքի և աշխարհի մասին:

Եկեղեցու բոլոր անդամների, և հատկապես առաջնորդների համար, որոնք սովորեցնելու պարասխանավորությունն ունեն, ավերարանջության աստվածաշնչյան հասկացողությունը խիստ կարևոր է:

## ***ԻՆՉ է ավերարանջությունը***

Ըստ Աստվածաշնչի Քրիստոնյաները կանչված են հոգալու, խնդրելու և անգամ համոզելու անհավապներին (2Կորնթ.5:11): Սակայն այս բանը պետք է անենք «ճշմարտությունը հայտնելով», որը նշանակում է «մերժել ամոթալի ծածուկ բաները» (2Կորնթ.4:2):

Այլ խոսքերով ավերարանջությունը մարդուն Տիտուսին ընդունելու որոշմանը հասցնելու համար մեր հնարավորության չափով ամեն բան անելը չէ, այլ ավելի քիչ մեր փեսակետները մարդկանց պարտադրելն է: Փորձել հոգևոր ծնունդը հարկադրել որևէ մեկի այնքանով է արդյունավետ, որքանով որ Եզեկիելը փորձում էր իրար միացնել մեռած, չորացած ոսկորները, որպեսզի մարդ դարձնի (Եզեկիել 37), կամ նման է ինչպես Նիկողեմետուր ցանկանում էր Տոգու մեջ ինքն իրեն նոր ծնունդ փար (Տովհաննես 3):

Բացի այդ ավերարանջությունը և անձնական վկայությամբ կիսվելը նույնը չեն: Ավերարանջությունը և հավաքքի պաշտպանության ռացիոնալ ներկայացումը նույնպես նույնը չեն: Անգամ բարեգործությունն ու ավերարանջությունը նույնը չեն, չնայած որ այս երեքն էլ կարող են ուղեկցել ավերարանջությանը: Ոչ էլ ավերա-

րանչությունը պետք է շփոթել իր արդյունքների հետ, որպես թե ավերարանչությունը արդյունավետ է միայն այն դեպքում, երբ դրան հետևում է ապաշխարություն:

Ո՛չ, ավերարանչությունը խոսքեր ասել է: Այն նորություն հաղորդել է: Այն Աստծուն հավատարիմ լինել է՝ ներկայացնելով բարի լուրը, որը բննարկեցինք 8-րդ գլխում, որ Քրիստոսը Իր մահվամբ և հարությանբ ճանապարհ է բացել հաշտեցնելու սուրբ Աստծուն և մեղավոր մարդու հետ: Աստված կրա ճշմարիտ ապաշխարություններ, երբ ներկայացնենք այս բարի լուրը (տե՛ս Նովհ.1:13; Գործք 18:9-10): Կարճ ասած, ավերարանչությունը բարի լուրի ազատ ներկայացնելն է և Աստծուն վստահելը, որ Նա մարդկանց դարձի կրեի (Գործք 16:14): «Փրկությունը գալիս է Տերից» (Նովսան 2:9; Նովհ.1:12-13):

### ***Ինչպե՞ս ավերարանել***

Երբ ես ավերարանում եմ, փորձում եմ մարդկանց փոխանցել երեք բան այն որոշումների համար, որոնք նրանք պետք է կայացնեն Ավերարանը լսելիս.

- Որոշումը արժեքավոր է, ուստի նախքան կայացնելը պետք է լավ մտածել (տե՛ս Ղուկ.9:62):
- Որոշումը հրապարակ է, ուստի պետք է հնարավորինս շուրջ կայացնել (տե՛ս Ղուկ.12:20):
- Որոշումն արժե կատարել, ուստի դուք կկամենաք այն կատարել (տե՛ս Նովհ.10:10):

Սա այն պատգամն է, որը մենք պետք է հաղորդենք անձնապես մեր ընդհանրիքին և ընկերներին: Սա այն պատգամն է, որը պետք է հաղորդենք համագործակցելով որպես մի ամբողջական եկեղեցի:

Կան մի քանի հրաշալի տպագրված աղբյուրներ ավերարանչության վերաբերյալ: Որպեսզի հասկանանք մեր սերտ կապը Ավե-

տարանի և մեր կիրառած ավերարանաչական մեթոդների հասկացողության միջև, խորհուրդ եմ տալիս կարդալ *Ուիլ Մեցգերի «Աստ՝ ճշմարտությունը»* (InterVarsity Press), Յան Մյուրիի *«Նրավերի համակարգը և արթնությունը»* (Banner of Truth Trust), ինչպես նաև իմ սեփականը՝ *Ավերարանը և Անձնական ավերարանչությունը* (Crossway, շուրով):

Ուրեմն, առողջ եկեղեցու ևս մեկ կարևոր նշաններից է ավերարանչությունը աստվածաշնչորեն հասկանալն ու կիրառելը: Միակ ճշմարիտ ան այն է, որը գալիս է Աստծուց և Իր ժողովրդի միջոցով:

**ԱՌՈՂՋ ԵԿԵՂԵՅՈՒ ԿԱՐԵՎՈՐ  
ՆՇԱՆՆԵՐԻՑ.**

**ԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ՆԱՍԿԱՅՈՂՈՒԹՅՈՒՆԸ**

**Արդյո՞ք անդամությունը** աստվածաշնչյան գաղափար է: Ինչ որ առումով, ո՛չ: Բացեք Նոր Կրակարանը և չեք գտնի մի պարամություն, որը ենթադրենք, թե ասի, Պրիսկիդան և Ակյուդասը փոխափոխեցին Նոն, սարուգեցին մի եկեղեցի, ապա մյուսը, և վերջապես որոշեցին միանալ երրորդ եկեղեցուն: Այսպեղից կարող ենք եզրակացնել, որ ոչ ոք «եկեղեցական առևտրով» չէր զբաղվում, քանի որ յուրաքանչյուր համայնքում մի եկեղեցի կար: Այս իմաստով, դուք չեք կարող Նոր Կրակարանում գտնել եկեղեցու անդամների ցանկ:

Սակայն ակնհայտ էր, որ Նոր Կրակարանի եկեղեցիները պահում էին որբնայրիկների ցուցակ, որոնց եկեղեցին օգնում էր (1Տիմ.5): Շատ ուշագրավ է, որ Նոր Կրակարանի մի շարք հաստատություններ խորհուրդ են փալիս, որ եկեղեցիները ունենան իրենց անդամներին նկարագրելու ինչ-որ կերպ: Նրանք գիտեին, թե ովքեր են պարկալանում իրենց ժողովներին և որոնք՝ ոչ:

Օրինակ, մի իրավիճակում, Կորնթոսի եկեղեցուց մի մարդ անբարո կյանքով էր ապրում «որն անգամ հեթանոսների մեջ չի լաված» (1Կորն.5:1): Պողոսը գրում է Կորնթացիներին և ասում, որ այս մար-

դուն իրենց ժողովից հեռացնեն: Տիմա մի պահ մտածեք այս մասին: Դուք չեք կարող որևէ մեկին պաշտոնապես *հեռացնել*, եթե առաջին հերթին նրան պաշտոնապես *չընդունեք*:

Կարծես, թե Պողոսը նկարի է ունենում հենց այս նույն մարդուն Կորնթացիներին ուղղված իր հաջորդ նամակում նշելով «բավական է այն պատիժը, որ մեծամասնության կողմից կրեց» (2 Կորն.2:6): Մի պահ նորից կանգ առնենք ու մտածենք: Դուք «մեծամասնություն» կարող եք ունենալ միայն այն դեպքում, եթե կա որոշված մարդկանց խումբ, այս դեպքում եկեղեցու որոշված անդամություն:

Պողոսին կարևոր էր, թե «ով մտալ» և «ով դուրս եկալ»: Նրա համար կարևոր էր, քանի որ Տեր Տիմոսն Ինքը եկեղեցիներին իշխանություն էր փոխել մարդկայնորեն որքան հնարավոր է լավագույնս շրջագծել այն սահմանը, որը կլինեք աշխարհից դուրս գտնվելու իրենց նշանագիծը:

«Ճշմարիտ եմ ասում ձեզ, ինչ որ կապեք երկրի վրա, կապված պիտի լինի երկնքում և ինչ որ արձակեք երկրի վրա, արձակված պիտի լինի երկնքում» (Մատթ.18:18; 16:19; Տովի. 20:23):

Առողջ եկեղեցիները, ինչպես ասացինք, համայնքներ են, որոնք առավելագույնս արտացոլում են Աստուծո ընկալնությունը: Ուստի, ուզում ենք, որ մեր երկրավոր կյանքի արձանագրությունները հնարավորինս մոտեցնենք երկնքի սեփական արձանագրություններին՝ Գառնուկի Այանքի Գրքում արձանագրված անունների ցանկին (Փիլ. 3:4; Տայրն.21:27):

Առողջ եկեղեցին ձգտում է ընդունել և արձակել հավատարմական մարդկանց, ինչպես Նոր Կտակարանի հեղինակներն են պատրվիրում: Այսինքն, այն ձգտում է ունենալ անդամության աստվածաշնչյան հասկացողությունը:

## ***Աստվածաշնչյան անդամություն նշանակում է նվիրում***

Տաճարն ունի աղյուսներ: Նոյն ունի ոչխարներ: Որթապուրնկն ունի ճյուղեր: Իսկ մարմինն ունի անդամներ: Որոշ իմաստով, եկեղեցու անդամությունը սկսում է, երբ Քրիստոսը փրկում է մեզ և Իր մարմնի անդամն է դարձնում: Մինչդեռ հետո Նրա այս գործը պետք է արտահայտվի մի որևէ գործող տեղական եկեղեցում: Այս իմաստով, եկեղեցու անդամությունը սկսում է, երբ մենք նվիրվում ենք մի որոշակի եկեղեցու: Քրիստոնյա լինել նշանակում է միանալ որևէ եկեղեցու:

Ներկաբար Սուրբ Գիրքը մեզ պատվիրում է կանոնավոր կերպով հավաքվել, որպեսզի հնարավոր լինի կանոնավոր կերպով ուրախանալ մեր ընդհանուր հույսով և մեկս մյուսին մղել սիրո և բարի գործեր կատարելու (Եբր.10:23-25): Եկեղեցու անդամությունը պարզապես արձանագրությունների մի փաթեթ չէ, որը ստուգվում է մի անգամ: Այն սենտիմենտալ զգացմունք չէ, ոչ էլ ծանոթ վայրի հանդեպ սիրո դրսևորում: Այն ծնողների հանդեպ ցուցաբերած ազնվություն կամ անազնվություն չէ: Այն պետք է լինի կենդանի նվիրման արտացոլում, այլապես անարժեք է: Անշուշտ, այն ավելի վաղ է բան անարժեք լինելը, այն վրանգավոր է, որը շուտով կքննարկենք:

## ***Աստվածաշնչյան անդամությունը պատասխանատվություն վերցնել է***

Քրիստոնյաների շրջանակում եկեղեցու անդամության կիրառությունը տեղի է ունենում այն ժամանակ, երբ Քրիստոնյաները հասկանում են ինչ է իրար հանդեպ պատասխանատվությունն ու սերը: Միանալով որևէ տեղական եկեղեցու, այդ եկեղեցու հովվին և մյուս անդամներին ասում ենք ոչ թե պարզապես նվիրվում ենք ձեզ, այլ



նվիրվում ենք ձեզ հավաքվելու, փալու, աղոթելու և ծառայության մեջ: Դրանով նրանց ասում ենք, որ կարող են մեզնից որոշակի ակնկալիքներ ունենալ և մեզնից հաշիվ պահանջել, եթե ինչ-որ հարցերում ճիշտ չենք հեղուկում: Եկեղեցուն միանալ, ասել է, թե. «Ես հիմա ձեր պարասխանատվությունն եմ, իսկ դուք՝ իմ»: (Այո, սա հակամշակութային է: Նույնիսկ ավելին, այն հակառակ է մեր մեղավոր բնությանը):

Աստվածաշնչյան անդամությունը պարասխանատվություն վերցնել է: Այն բխում է մեր փոխադարձ պարավորություններից, ինչպես որ Սուրբ Գրքում մեր հանդիպած բոլոր *միմյանց* խոսքը պարունակող հարվածներն են սովորեցնում՝ միմյանց սիրեք, միմյանց ծառայեք, միմյանց քաջալերեք: Բոլոր այս պարավորանները պետք է ներառվեն առողջ եկեղեցու պայմանագրի մեջ (նայեք հավելվածը):

Վերջին երեք նշանները ճիշտ հասկանալու դեպքում այս նշանը ճիշտ կհասկանաք: Որքան եկեղեցու անդամները փայփայեն Ավետարանը, հասկանան, որ դարձը Աստծո գործն է և ավետարանեն, պարավորելով «փնտրողներին» հաշվի առնելու գինը, ապա այնքան ավելի նրանք կաճեն, գիտակցելով իրենց փոխադարձ պարասխանատվությունները: Որքան քիչ Քրիստոնյաները իրենց եկեղեցիները համարեն որպես «եկ ինչպես կուզես» և «վերցրու ինչ կարող ես» պիտակով, այնքան ևս մեկ Քրիստոնեական առևտրի կենտրոն կամ հանրախանութ կպակասի, որտեղ կարող են սողոսկել: Եվ այնքան ավելի նրանք եկեղեցիներին կվերաբերվեն որպես մարմնի, որտեղ բոլոր անդամները հոգում են միմյանց համար, ինչպես այն փանը, որտեղ իրենք են ապրում:

Ցավոք դժվար չէ գրանել այն մեծ ճեղքը, որ կա անդամության ցանկի մեջ պաշտոնապես գրանցված մարդկանց թվի և կանոնավոր եկեղեցի հաճախողների թվի միջև: Պատկերացրեք մի եկեղեցի, որն ունի երեք հազար անդամ, սակայն միայն վեց հարյուրն են հաճա-

խում: Ցավում եմ, որ մերօրյա շաբա ավերարանական հովիվներ ավելի շաբա հպարտանում են իրենց այսպես կոչված անդամական մեծ թվով, քան անհանգստանում այն մեծ թվով անդամների համար, որոնք եկեղեցի չեն հաճախում: Ըստ վերջերս կատարած հետազոտության, մի փոքրիկ Նարավային Մկրտակյան եկեղեցի, որն ունի 233 անդամ, միայն 70 էին հաճախում կիրակնօրյա ծառայություններին:

Իսկ որքանո՞վ է լավ վիճակում մեր նվիրատվությունը: Ո՞ր համայնքներո ունեն այնպիսի ֆինանսական բյուջե, որը հավասար է, եթե միայն վերցնենք իրենց անդամների ընդհանուր փարեկան եկամտի փաստ փոկոսին:

Ֆիզիկական սահմանափակումները կարող են խանգարել եկեղեցի հաճախելուն և ֆինանսական հոգսերը կարող են խանգարել նվիրատվությանը: Սակայն այս դեպքում հետաքրքիր է, թե արդյո՞ք եկեղեցիները իրենց անդամների թիվը կուոք չեն դարձնում: Թվերն ինքնին շաբա հեշտությամբ կարող են կուոքեր դառնալ ինչպես քանդակված կուոքերը, միգուցե և ավելի հեշտությամբ: Մինչդեռ Աստված գնահատելու է մեր կյանքերը և կշռելու է մեր գործերը, կարծում եմ ավելին, քան հաշվելու է մեր անդամներին:

### ***Աստվածաշնչյան անդամություն նշանակում է փրկության հաստատում***

Ի՞նչն է այդքան վրանգավոր եկեղեցի չհաճախելու և պատասխանատվությունից խուսափելու մեջ: Եկեղեցու կյանքում չներգրավված անդամները շփոթում են թե՛ իրական անդամներին և թե՛ ոչ Քրիստոնյաներին այն հարցում, թե ինչ է նշանակում լինել Քրիստոնյա: Իսկ ակտիվ անդամները չեն ծառայում կամովին ակտիվություն չցուցաբերող անդամներին, երբ նրանց թողնում են մնալ որպես եկեղեցու անդամներ, քանի որ անդամությունը եկեղեցու մի-

արան հաստատումն է մարդու փրկության հարցում: Արդյո՞ք հասկանալի բացատրվեց: Ինչ-որ մեկին եկեղեցու անդամ կոչելով, դուք ասում եք, որ այդ անձը ունի որպես Քրիստոնյա ձեր եկեղեցու հաստատումը:

Ուրեմն, եթե մի եկեղեցի, որը չի տեսել իր անդամներից մեկին արդեն ամիսներ, նույնիսկ փարիսեյ շարունակ, ինչպե՞ս կարող է վկայել, որ այդ անձը հավատարմորեն վագում է իր առջև եղած ընթացքը: Եթե մեկը բացակայում է մեր միջից և ոչ էլ միացել է Աստվածաշնչին հավատացող մեկ այլ եկեղեցու, ինչպե՞ս կարող ենք վստահ լինել, որ նա երբևէ եղել է մեզինից մեկը (տե՛ս 1 Տովհ.2:19): Մենք չենք պնդում, որ այդպիսի չներգրավված անդամները պարտադիր Քրիստոնյաներ չեն, մենք պարզապես չենք կարող հաստատել, որ նրանք Քրիստոնյաներ են: Մենք չպետք է ասենք այդ մարդուն. «Մենք գիտենք, որ դու դժողք ես գնում». այլ պարզապես կարող ենք ասել, «Մենք այլևս չենք կարող արտահայտել մեր վստահությունն այն մասին, որ դու երկինք ես գնում»: Երբ մեկը ժամանակավորապես բացակայում է, եկեղեցու հաստատումը լավագույն դեպքում լինում է միամիտ, իսկ վարագույնը՝ անազնիվ:

Եկեղեցին, որը գործադրում է աստվածաշնչյան եկեղեցու անդամագրություն, չի պահանջում իր անդամներից կատարելություն, այլ՝ խոնարհություն և ազնվություն: Եկեղեցին չի կանչում նրանց որոշումներ կրելու, այլ կանչում է իրական աշակերտության: Այն չի բացառում անհարի Աստծո հետ ունեցած սեփական փորձառության կարևորությունը, սակայն ոչ էլ այն չափազանց կարևորում է դեռ ոչ հասուն անհարների մոտ: Այդ իսկ պարճառով Նոր Կտակարանը ներկայացնում է Աստծո հետ ուխտի մեջ մտած մարդկանց և մեկը մյուսի հետ համագործակցող հաստատման դերը:

## ***Աստվածաշնչյան անդամությունն իմաստ ունի***

Նույսով են եկեղեցիների անդամության վիճակագրությունը դառնա ավելի ու ավելի նշանակալի, որպեսզի *անունով* անդամները դառնան *փաստացի* անդամներ: Սա նշանակում է ժամանակ առ ժամանակ անուններ հեռացնել եկեղեցու ցուցակներից (բայց ոչ մեր սրբերից): Շարք հաճախ սա նշանակում է ուսուցանել նոր անդամներին, թե ինչ նպատակ ունի Աստված եկեղեցու համար և շարունակ հիշեցնել ներկայիս անդամներին եկեղեցական կյանքին իրենց նվիրման մասին: Իմ եկեղեցում մենք սա անում ենք մի քանի տարբեր ճանապարհներով, սկսած անդամության դասերից մինչև ամեն անգամ Տերունական Ընթրիքն ընդունելիս եկեղեցու դավանանքի բարձրաձայն ընթերցանությամբ:

Երբ մեր եկեղեցին առաջադիմեց առողջությամբ, կիրակի առավոտյան ծառայություններին մարդկանց քանակը ևս մեկ անգամ գերազանցեց մեր եկեղեցում պաշտոնապես անդամակցած անունների ցանկին: Անկասկած սա պետք է լինի նաև ձեր փափագը ձեր եկեղեցիների համար:

Նին ընկերներին սիրելը չի նշանակում սենտիմենտալ պարճառներով նրանց թույլ տալ, որ ամուր բռնեն մեր համայնքում իրենց անդամությունը: Մենք սիրում ենք նրանց քաջալերելով նրանց միանալու մեկ այլ եկեղեցու, որտեղ նրանք կարող են սիրել և սիրվել ամեն շաբաթ, նույնիսկ ամեն օր: Ուստի մեր եկեղեցու ուխտի մեջ խոստանում ենք. «Երբ րեղափոխվենք այս վայրից, հնարավորինս շուտ կմիանանք մեկ այլ եկեղեցու, որտեղ կարող ենք տանել այս ուխտի հոգին և Աստծո Խոսքի սկզբունքները»: Այս նվիրումը առողջ աշակերտության մի մասն է կազմում, հատկապես մեր այս վաղանցիկ դարաշրջանում:

Եկեղեցու վերականգնված անդամակցության գույշորեն գործադրությունը կլինի շարք օգտակար: Այն մեր եկեղեցիների վկայու-

թյունը անհավասարների համար կդարձնի ավելի հստակ: Իսկ ավելի թույլ ոչխարների համար հոտից մոլորվելը ավելի կդժվարանա և չնայած դրան կարող են իրենց կոչել ոչխար: Այն կօգնի ավելի հասուն Քրիստոնյաների աշակերպություն ձևավորել և կենտրոնանալ նրանց վրա: Այն կօգնի եկեղեցու առաջնորդներին հստակ իմանալու, թե ում համար են նրանք պատասխանատու: Այս ամենի մեջ կփառավորվի Աստված:

Աղոթե՛ք, որ եկեղեցուն անդամակցելը շատ ավելի նշանակություն ունենա, քան ունի ներկայիս: Այդպիսով մենք կարող ենք իմանալ, թե ում համար աղոթենք, ում քաջալերենք և հավաքքի համար ում կոչ ուղղենք: Եկեղեցու անդամ լինել նշանակում է լինել Քրիստոսի մարմնին գործնականում համակցված: Դա նշանակում է նախքան կմեկնենք մեր երկնավոր փունը, որպես օտարական ճամփորդներ միասին ճամփորդել այս աշխարհում: Անշուշտ առողջ եկեղեցու ևս մեկ նշան է եկեղեցու անդամության հասկացողությունը:

**ԱՌՈՂՋ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱՐԵՎՈՐ  
ՆՇԱՆՆԵՐԻՑ.**

**ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱՐԳԱՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

**Եկեղեցու աստվածաշնչյան** անդամության հասկացողությունից անմիջապես բխում է եկեղեցու աստվածաշնչյան կարգապահությունը: *Անդամությունը* սահմանագիծ է դնում եկեղեցու շուրջը, եկեղեցուն աշխարհից սահմանազատելով: *Կարգապահությունը* օգնում է այս սահմանների ներսում ապրող եկեղեցուն հավաքարիմ մնալու այն բաներին, որոնց պարճառով գծվել են այդ սահմանագծերը: Այն իմաստավորում է եկեղեցու անդամ լինելը և հանդիսանում է առողջ եկեղեցու կարևոր նշաններից մեկը:

Ի՞նչ է իրականում եկեղեցու կարգապահությունը: Նեղ իմաստով, այն իրեն Քրիստոնյա դավանող մեկին եկեղեցու անդամությունից հեռացնելն ու Տիրոջ Ընթրիքին մասնակցելուց զրկելն է՝ լուրջ անապաշխար մեղքի համար, որից նա չի ուզում հրաժարվել:

***Աստվածաբանականության պատկերումը***

Եկեղեցու կարգապահությունը հասկանալու համար մեզ կօգնի երրորդ գլխում փիլեզերքի, մարդկության, Իսրայելի և եկեղեցու սրբեղծման Աստծո նպատակների մասին ներկայացվածը վերհիշե-

լը: Աստված սրեղծեց տիեզերքը, որպեսզի ցույց տա Իր փառքը: Ապա Նա սրեղծեց մարդկանց միևնույն նպատակով, և հատկապես մեզ սրեղծեց, որպեսզի կրեք Իր պատկերը (Ծննդ.1:27): Մարդկությունը՝ Ադամն ու Եվան ցույց չտվեցին Նրա փառքը, ուստի նրանց պարտեզից վտարեց:

Ապա Աստված կանչեց Իսրայելին Իր փառքը ցույց տալու, հատկապես բոլոր ազգերին ցույց տալու Իր սրբությունն ու բնավորությունը այնպես ինչպես հայրված էր նրանց Օրենքի մեջ (տե՛ս Ղևր.19:2; Առակ.24:1,25): Ընթացքում այս օրենքը դարձավ հիմք ուղղելու և նույնիսկ որոշ մարդկանց հասրակությունից հեռացնելու համար (ինչպես Թվոց 15:30-31): Վերջին հաշվով, այն հիմք հանդիսացավ հենց Իսրայելի համար, որ վտարվի երկրից:

